

ՄԵՐ ԱՆԿԻԻՆԵՆ

Կառավարութեան Ծրագիրը Ու Ընդդիմութեան Պահուածքը

Նորընտիր խորհրդարանի կազմութենէն ետք առաջին անգամ ըլլալով վարչապետ Նիկոլ Փաշինեան ելոյթ ունեցաւ Ազգային ժողովէն ներս՝ ներկայացնելու համար կառավարութեան ծրագիրը եւ ստանալու խորհրդարանի հաւանութիւնը:

Վարչապետի ելոյթի ակարտին, երբ հերթը եկաւ հարց ու պատասխանի բաժնին, նկատելի էր որ, ընդդիմադիր պատգամաւորները չէին եկած ծրագրի շուրջ կարծիք յայտնելու, քննադատելու եւ կամ առաջարկներ ներկայացնելու: Անոնց ելոյթները ու հարցադրումները կը վերաբերէին անցեալին, յատկապէս պատերազմին ու անոր յաջորդող զարգացումներուն: Այդ անշուշտ իրենց իրաւունքն է եւ ազատ են խօսելու նախընտրած հարցի մասին: Սակայն, առաջին վայրկեանէն իսկ պարզ դարձաւ որ, նպատակը լուսաբանութիւն ստանալը չէր եւ ոչ ալ վարչապետը նեղ կացութեան մատնելը, այլ խորհրդարանը վերածել վայրի մը, ուր կոշտ լեզուակերպութիւնը, վիճաբանութիւնը ու նաեւ ծեծկռտուքը դառնան նորմալ երեւոյթներ:

Իրենց յատուկ փողոցային բառապաշարը փոխադրելով Ազգային ժողովի դահլիճէն ներս, պարզ կը դառնայ որ, ընդդիմադիր փոքրաթիւ խմբակը չէ եկած զբաղելու իր հիմնական աշխատանքով՝ օրէնսդրութեամբ, այլ կը ձգտի խանգարել Ազգային ժողովի բնականոն աշխատանքը, այն յոյսով որ, որոշ ժամանակ ետք կը կարողանայ ստիպել նոր արտադրութիւն ընտրութիւններ՝ յոյս ունենալով հասնելու իր բուն նպատակին՝ իշխանութեան:

«Դաւաճան», «հողատու» ու նման բառապաշար օգտագործողներուն Փաշինեան ստիպուած եղաւ յիշեցնել իրենց անցեալի մասին, խօսելով Գոյնեմբեր 27-ի, Մարտ 1-ի, Սեղրիմ յանձնելու, մարդասպանութեան, պետական գանձի կողոպուտի ու միլիարներ դիզելու մասին:

«Ժողովուրդն իր քուէարկութեամբ որոշել է՝ դաւաճանն ով է, անձնատուրը ով է, հողատուն ով է: Ինձ մի ստիպէք, որպէսզի ցոյց տամ, թէ ով պիտի խորշի եւ ով է դաւաճանը՝ պետութիւնը թալանելով, ով է հողատուն, ով է անձնատուրը: Կոչ եմ անում հանդարտուել», - ըսաւ Փաշինեան իր խօսքը ուղղելով խորհրդարանի դահլիճէն ներս նստած նախկին ռեժի-

Ծեծկռտուք Ազգային ժողովէն Ներս Փաշինեան Ներկայացուց Կառավարութեան Ծրագիրը

«Տարածաշրջանի ապաշրջափակումը պէտք է լինի Հայաստանի արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւններից մէկը», Օգոստոս 24-ին Ազգային ժողովէն ներս, Կառավարութեան 2021-2026 թուականներու գործունէութեան ծրագիրը ներկայացնելու առէն, յայտարարեց վարչապետ՝ Նիկոլ Փաշինեան՝ միեւնոյն ժամանակ ընդգծելով, որ այս գործընթացը չի կրնար տեղի ունենալ Հայաստանի եւ Արցախի անվտանգային եւ կենսական շահերուն հաշուին:

«Սա լրջագոյն հնարաւորութիւն է՝ ճեղքելու Հայաստանի Հանրապետութեան շուրջ 30 տարի շարունակուող շրջափակումը: Սա պարզ գործընթաց չէ եւ սրում է ինչ-որ միջանցքների մասին ատրպէյճանական կողմի սադրիչ յայտարարութիւններով», - ըսաւ Փաշինեանը կրկին շեշտելով, որ ո՛չ Նոյեմբեր 9-ի եւ ո՛չ Յունուար 11-ի յայտարարութիւններուն մէջ, որեւէ արտապայտութիւն, յղում եւ ձեւակերպում չկայ Հայաստանի տարածքով միջանցքի ստեղծման մասին:

«Խօսքն ուրիշ բանի մասին է՝ ինչպէս Հայաստանը պիտի Ատրպէյճանի տարածքով ճանապարհ ստանայ՝ Ռուսաստանի, Իրանի հետ փոխադրային հաղորդակցութեան համար, այնպէս էլ Ատրպէյճանը



Վարչապետ՝ Նիկոլ Փաշինեան Կառավարութեան ծրագիրը կը ներկայացնէ խորհրդարանի նիստին

Հայաստանի տարածքով պիտի ճանապարհ ստանայ՝ իր արեւմտեան շրջանների, Նախիջևեանի հետ փոխադրային հաղորդակցութեան համար», - ըսաւ վարչապետը:

Փաշինեան չհերքեց, թէ հաղորդակցութիւններու բացման թեման որոշակի վտանգներ կը պարունակէ Հայաստանի շահերուն համար:

«Դրա համար կառավարութեան ծրագրում նշել ենք, որ ապաշրջափակումը պէտք է լինի Հայաստանի արտաքին քաղաքա-

կանութեան առաջնահերթութիւններից մէկը, միաժամանակ այս գործընթացը չի կարող տեղի ունենալ Հայաստանի եւ Արցախի անվտանգային եւ կենսական շահերի հաշուին», - ըսաւ Փաշինեանը՝ շարունակելով. - «Եթէ ուզում ենք բարենպաստ տարածաշրջանային միջավայր ձեւաւորել Հայաստանի շուրջ, պէտք է Հայաստանը բարենպաստ միջավայր դարձնենք տարածաշրջանի համար, ընդ որում փոխադարձութեան սկզբունքով՝ ոչ աւել, ոչ՝ պակաս: Սա մեր անվտանգութեան ռազմավարական մարտահրաւէրն է»:

Գործադիրի ղեկավարը նշեց, որ տարածաշրջանի կայունութիւնը եւ խաղաղութիւնը իրենց երկարատեւ ռազմավարութիւնն է, իսկ

ՍԴՀԿ Կեդրոնի Անդամներու Հանդիպումները Հայաստանի Սէջ



ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան պատուիրակութեան հանդիպումը վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ

ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան Ատենապետ Ընկ. Տօքթ. Համբիկ Սարաֆեան, ընկերակցութեամբ Կեդրոնի անդամ Ընկ. Խաչիկ Քէշիշեանի, Օգոստոսի կէսերուն այցելեցին Հայաստան, ուր ունեցան շարք մը հանդիպումներ հայրենի ղեկավարութեան հետ, լրատուամիջոցներու հետ զրոյցներու ընդմէջէն բացատրեցին Կուսակցութեան տեսակէտները այժմէական տարբեր հարցերու շուրջ, ինչպէս նաեւ զբաղեցան Հայաստանի Հնչակեան կառույցներու ներքին

կազմակերպչական հարցերով:

Հանդիպում Վարչապետ Փաշինեանի Հետ

Օգոստոս 10-ին Վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչներ՝ Կեդրոնական վարչութեան ատենապետ՝ Համբիկ Սարաֆեանը, Կեդրոնական վարչութեան անդամ՝ Խա-

Քրիս Դոլտըն Կը Ներկայացնէ Սիւնիքի Հետ Քոյր Նահանգ Հոչակելու Առաջարկութիւն



Քալիֆորնիոյ Նահանգային խորհրդարանի անդամ Քրիս Դոլտըն

Քալիֆորնիոյ Նահանգային խորհրդարանի անդամ եւ Փաստադատ Նախկին քաղաքապետ Քրիս Դոլտըն հանդէս եկաւ Հայաստանի

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Խաղաղութիւն Չեն Սուրում, Պարտադրում Են

ԷՄՍԱ ԳԱՐԻԷԼԵԱՍ

Փաշինեանը սահման գծելով՝ պարիսպ է կառուցելու, իսկ Ալիեւն ասում է՝ կը կանգնենք այնտեղ, որտեղ յարմար կը գտնենք Մեր ակնկալիքն է, որ Ռուսաստանը չի գինի Հայաստանին, քանի որ դրա անհրաժեշտութիւնը չկայ, Դա մեր հողն է: Մենք մեր հողում ենք: Սեւ լիճը մերն է, միւս տարածքները եւս մերն են: Մենք վերադարձել ենք: Մենք կանգնած ենք այնտեղ, որտեղ պէտք է, եւ եթէ ցանկանանք, կը կանգնենք այնտեղ, որտեղ յարմար կը գտնենք, սրանք Ատրպէյճանի նախագահի՝ օրերս արած յայտարարութիւններինց որոշ դրուագներ են: Իսկ սա Նիկոլ Փաշինեանի խօսքն է, որը նա հնչեցրել է վերջերս ՊՆ աշխատակազմին եւ Զինուած ուժերի բարձրագոյն սպայակազմին Պաշտպանութեան նորանշանակ նախարար Արշակ Կարապետեանին ներկայացնելիս: Ունենալ դեմարկացուած եւ դելիմիտացուած սահմաններ, մօտաւորապէս նոյնն է, թէ ունենալ պարիսպ սեփական երկրի շուրջ: Եւ ես շարունակում եմ այս դիրքորոշումն ունենալ: Նա, թէեւ միաժամանակ արձանագրել է, որ Մայիսի 12-ից Ատրպէյճանի գինուած ուժերի ստորաբաժանումներն ապօրինի կերպով հատել են ՀՀ սահմանը, սակայն նշել է. Մեր դիրքորոշումը ի սկզբանէ եղել է հետեւեալը. քանի դեռ կայ Հնարաւորութիւն՝ իրադրութիւնը լուծել դիւանագիտական, քաղաքական ճանապարհով, մենք գնալու ենք այդ ճանա-

պարհով: Առհասարակ, տպաւորութիւն է, որ Հայաստանն ու Ատրպէյճանն ապրում են տարբեր իրականութիւններում: Իհարկէ, հասկանալի է, որ Ատրպէյճանի նախագահն ինչպէս միշտ զարկ է տալիս նաեւ քարոզչութեանը, եւ այն, ինչ նա յայտարարում է՝ ունեն պատճառներ: Միայն այն փաստը, որ 44-օրեայ պատերազմի աւարտից 9 ամիս անց Ալիեւն ու իր կինը դեռ գինուորական համազգեստով են շրջում Լեռնային Ղարաբաղի վերադարձում, բայց անմարդաբանկ տարածքներում, հաւանաբար վկայում է այն մասին, որ նրանք իրենց յաղթանակի ուժին իրականում այնքան էլ չեն հաւատում ու դեռ ունեն մտավախութիւններ: Եթէ Ալիեւը շարունակում է սպառնալիքները, ընդ որում, արդէն նաեւ Ռուսաստանի ուղղութեամբ, ուրեմն, ամէն ինչ հարթ չէ Պարուի համար այնպէս, ինչպէս նրանք էին ակնկալում: Այս ամէնը հասկանալի է: Սակայն, այնուամենայնիւ, խիստ տարօրինակ է բառապաշարի, ուղերձների այն տարբերութիւնը, որոնք Հայաստանն ու Ատրպէյճանը հրապարակային փոխանակում են: Մենք ո՞ւմից ենք խաղաղութիւն ակնկալում: Մի պետութեան ղեկավարից, որի երկրի ստորաբաժանումներն արդէն 3 ամիս ներխուժել են մեր պետութեան ինքնիշխան տարածք ու ի լուր աշխարհի յայտարարում են՝ որտեղ կ'ուզենանք, այնտեղ էլ կը կանգնենք: Մենք ո՞ր պետութեան հետ ենք այդքան շտապում դեմարկաց-

ուած եւ դելիմիտացուած սահմաններ ունենալ, մի պետութեան, որի հետ դիւանագիտական յարաբերութիւններ դեռ չունենք, որի հետ դեռ խաղաղութեան համաձայնագիր չունենք, մի երկրի հետ, որի ղեկավարը ամէնշաբաթեայ ռեժիմով հրապարակային սպառնալիքներ է հնչեցնում մեր պետութեան ուղղութեամբ: Գումարած այս ամէնին՝ սահմանին իրավիճակը լարուած է, պարբերաբար սրւում է, հայկական կողմը գոհեր է ունեցել, այսինքն, Հայաստանը շարունակում է մնալ կիսապատերազմական իրավիճակում: Ու առհասարակ, այս իրավիճակում նոյնիսկ հարց է առաջանում՝ ինչո՞ւ ռազմական դրութիւն չի յայտարարում: Պատերազմից 9 ամիս անցել է, որը քիչ ժամանակ չէր ոչ բանակի ամրապնդման, ոչ էլ Հայաստանի գործընկեր պետութիւնների հետ արդիւնաւէտ աշխատանք տանելու համար՝ Ատրպէյճանի շարունակական ռազմատենչ քաղաքականութեան վրայ ուշադրութիւն դարձնելու տեսանկիւնից: Բայց սա էլ չի արուել: Եթէ Հայաստանի կառավարութիւնը տուել է խոստումներ ինչ-ինչ պայմաններով Ատրպէյճանի հետ խաղաղութեան համաձայնագիր ստորագրելու, մեր հասարակութեանը պէտք է բացատրել յստակ՝ ի՞նչ պայմաններով, ի՞նչ երաշխիքներով: Օգոստոսի 18-ին կայացավ ՀՀ կառավարութեան հերթական նիստը, որի ընթացքում Նիկոլ Փաշինեանը ներկայացրեց կառավարութեան հնգամեայ ծրագիրը: Մեր

ծրագիրը եւ պլանն այն է, որ առաջիկայում ՀՀ սահմանապահ զօրքերն աւելի ու աւելի շատ տեղամասեր ընդունեն Հայաստանի գինուած ուժերից: Այսինքն՝ սահմանապահ ծառայութեան պատասխանատուութեան տարածքները կ'ընդլայնուեն: Այս առումով՝ սահմանապահ զօրքերը պիտի ընդլայնուեն, վերափոխուեն, բարեփոխուեն: Իմիջիայրոց՝ սա նաեւ խաղաղ տարածաշրջանային օրակարգն առաջ մղելու մեր նկատառումը եւ նպատակադրումն է արտահայտում, ասում է նա: Բանակի հզօրացման, Հայաստանի հանդէպ ակնյայտ թշնամական քաղաքականութիւն վարող Ատրպէյճանին զսպելու առումով համարժէք քայլեր ձեռնարկելու մասին՝ ոչ մի խօսք: Հայոց արդիականացուող բանակի վերաբերեալ Փաշինեանն ասաց այսքանը. Հայաստանում սկսուել եւ մեծ ծաւալով ընթանում է գինուած ուժերի բարեփոխման գործընթացը, եւ այս առումով, իհարկէ, բանակը, բարեփոխուած գինուած ուժերը պէտք է լինեն մեր արտաքին անվտանգութեան ապահովման հիմնական գործօնը: Աւելին, ՀՀ-ն պատրաստակամ է ջանքեր գործադրել թուրքիայի հետ յարաբերութիւնների կարգաւորման ուղղութեամբ: Կառավարութեան ծրագրում ասուած է. Հայաստանի եւ թուրքիայի միջեւ դիւանագիտական յարաբերութիւնների բացակայութիւնը, փակ սահմանները, ինչպէս նաեւ 44-օրեայ

Շար.ը էջ 17

Նիկոլ Փաշինեանի Առանցքային Յայտարարութիւնը. Յո երթաս՝ ԱԳՆ

ՀԱՅԿ ԻՍՐԱԷԼԵԱՍ

Մեզ պէտք է արտգործնախարարութիւն, որը կը կիսի քաղաքական պատասխանատուութիւնը երկրի յայտարարութեան համար, ԱԳՆ աշխատակիցներին ներկայացնելով նոր նախարար Արարատ Միրզոյեանին, յայտարարել էր վարչապետ Նիկոլ Փաշինեանը: Դա բաւականին ուշադրութեան արժանի յայտարարութիւն է, որովհետեւ փաստացի ստացուած է, որ արտգործնախարարութեանը ընձեռնում է որոշակի ինքնուրոյնութիւն: Յամենայն դէպս, եթէ խօսքը պատասխանատուութիւն կիսելու մասին է, ապա դա ինքնաբերաբար նշանակում է նաեւ լիազօրութիւն, իրաւունք: ԱԳՆ Հայաստանի Սահմանադրութեան եւ օրէնքների շրջանակում ունի դա, միաժամանակ խօսքը թերեւս նաեւ քաղաքական այսպէս ասած ինքնուրոյնութեան եւ իրաւունքների մասին է: Հակառակ դէպքում կը ստացուի, որ ԱԳՆ ոչ թէ պատասխանատուութիւն է կիսելու, այլ աւելի շուտ քառութեան նոխագի կարգավիճակ՝ եթէ պատասխանատուութիւն դրուած է, իսկ ինքնուրոյնութիւն՝ չի տրուած: Ըստ այդմ, Նիկոլ Փաշինեանի յայտարարութիւնը առնուազն առաջացնում է հարցը, թէ ի՞նչ ինքնուրոյնութիւն է տրուած Հայաստանի արտաքին գործերի նախարարութեանը, ինչպիսի՞ն է լինելու դրա դէ ֆակտո շրջանակը, որովհետեւ դէ իւրէ շրջանա-

կը բնականաբար գծուած է Սահմանադրութեամբ եւ օրէնքներով: Միեւնոյն ժամանակ, Փաշինեանի յայտարարութիւնը որոշակի լոյսի ներքոյ է բերում նախորդ ժամանակաշրջանի, նախորդ նախարարների հետ կապուած իրավիճակը: Մասնաւորապէս, այդ համատեքստում վերստին ուշադրութեան կեդրոնում է յայտնուած նախկին նախարար Արա Այվազեանի հրաժեշտի սկանդալային ելոյթը, մասնաւորապէս այն յայտարարութիւնը, որ ինքը հրաժարական է տալիս, որպէսզի չլինի որեւէ կասկած՝ թէ այդ կառուցում կարող են լինել Հայաստանի դէմ գործընթացների մասնակցողներ, Հայաստանի դէմ որոշում կայացնողներ: Յիշատակումն ի հարկէ բառացի չէ: Արտաքին գործերի նախարար Արա Այվազեանն այդպէս էլ որեւէ կերպ չպարզաբանեց, թէ ինչի մասին էր ելոյթը, ինչ նկատի ունէր Հայաստանի պետական շահի դէմ գործընթաց կամ որոշումներ ասելով, ո՞վ էր մասնակցում այդպիսի գործընթացի, ինչի՞ն էր այն վերաբերում: Արա Այվազեանի հրաժարականը եղաւ սահմանային իրավիճակի լարման առաջին շրջանում, երբ նաեւ հրապարակում յայտնուեց այսպէս ասած եռակողմ փաստաթղթի մի նախատարայէջ՝ իսուռում էր հայաստարայէջճանական սահմանի դեմարկացիայի եւ դելիմիտացիայի գործընթացի աշխատանքային խումբ ստեղծելու մասին: Զուգա-

հետ, Նիկոլ Փաշինեանն էլ ԱՊՆ իստում արեց սահմանային լարումը հանգուցալուծելու համար արեց յայտնի առաջարկը՝ միջազգային դիտորդներ տեղակայելու մասին: Ահա այդ ֆոնին եղաւ նախարար Այվազեանի հրաժարականն ու սկանդալային յայտարարութիւնը: Ընդ որում, ոչ միայն նրա, այլ նաեւ գործնականում բոլոր փոխնախարարների: Ընդ որում, դրան ի պատասխան, Հայաստանի վարչապետի մամուլի խօսնակը յայտարարեց, թէ իրենք էլ հետաքրքրութեամբ սպասում են Արա Այվազեանի պարզաբանմանը, թէ ինչ կամ ում նկատի ունէր նա այդ յայտարարութիւնն անելիս: Թէ՞ Արա Այվազեանն ու փոխնախարարները պարզապէս խուսափում էին պատասխանատուութիւնից, ինչի ակնարկն է նաեւ Նիկոլ Փաշինեանի ներկայիս յայտարարութիւնը, որ պէտք է պատասխանատուութիւն կիսող ԱԳՆ: Ամբողջ հարցն այն է, սակայն, որ պատասխանատուութիւնը կարող է կիսուլ նաեւ այդ կերպ, այլ կերպ ասած՝ քաղաքական ղեկավարութեան հետ անհամաձայնութեամբ եւ հրաժարականով: Ասել է, թէ, պատասխանատուութիւն կիսող ԱԳՆ չի նշանակում քաղաքական ղեկավարութեան հետ անվերապահ համաձայնող: Եթէ պատասխանատուութեան ընկալումն այդպիսին է, ապա խօսքն արդէն ոչ թէ պատասխանատուութեան, այլ, գուցէ կար-

Շար.ը էջ 17



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
 ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՐԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

Շար.ը էջ 17

ԼՈՒՐԵՐ

Միլիառներու Մասին Գնայ Վստահորդիդ Յետ Խօսիր. Փաշինեանը՝ Արամ Վարդեանեանին

Աժ-ի նիստին, «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր՝ Արամ Վարդեանեանի դիմած է վարչապետ Նիկոլ Փաշինեանին. «Քրէական գործ կայ յարուցուած, ուղիղ օփերաթիւ կապի մասին ձեր եւ թշնամի Ալիեւի միջեւ, որու շրջանակներում 5 միլիարդից էին խօսում: Ի՞նչ կ'ասէք»:

«Էդ միլիառները մասին ձեր վստահորդի հետ ճիշդ կ'անէք, որ խօսէք: Այնտեղ էլ մարդ կայ, թող գայ էդ 5 միլիարդի հետ կապուած ասի, բացատրի ցուցմունք տայ, վկայութիւն տայ: Բա որ ասում էք՝ ժողովուրդը չի կարող որոշում կայացնել, բա էդ ինչի՞ էիք 300 հոգով գնդակահարութեան որոշումներ կայացնում, կախաղաններ հանելու որոշումներ կայացնում, բեմադրում: Բա դուք կարող էք երեք հոգով որոշումներ կայացնէք, ժողովուրդը չի կարող 800 հազար հոգով որոշում կայացնի: Ժողովուրդը կարող է դատավճիռ կայացնել եւ կ'իրագործի էդ դատավճիռը: Եւ ասում եմ՝ միլիառները մասին գնայ վստահորդիդ հետ խօսիր, մենք դեռ կ'անդրադառնանք վստահորդիդ միլիառներին», ակնարկելով Ռոպերթ Քոչարեանին ըսած է Փաշինեան:

Դաշնակցական Արծուիկ Մինասեանի դիտարկման, թէ իրենք Աժ-էն ներս տեղի ունեցած միջադէպի վերաբերեալ հաղորդում պիտի ներկայացնեն յանցագործութեան մասին, Փաշինեան չի շեղելով իրենց կուսակիցի սպանութիւնը ճաշարանի գուգարանին

մէջ՝ Ռոպերթ Քոչարեանի դիմապահներուն կողմէ ըսաւ. «Ես Պետական պահանջութեան ծառայութեանը շատ խիստ հրահանգել եմ, որ որեւէ մէկին, առաւել եւս գուգարաններում, անգոյշ չքաշքշեն»:

«Դուք խօսում էք յանցագործութիւնների մասին, բայց եթէ չի շրջութիւնս չի դաւաճանում, հիմա դատական գործընթաց է գնում ձեր կուսակից Պողոս Պողոսեանին անգոյշ քաշքշելու հետեւանքով սպանութեան գործով, եւ ինչքան չի շրջում եմ՝ դուք առնուազն տասնութիւն տարի այդ յանցագործութեան մասին չէք էլ բարձրաձայնել, որ ձեր կուսակից ընկերոջը ծեծելով սպանել են Պապլավիկի գուգարանում», - ի պատասխան «Հայաստան» դաշինքի պատգամաւոր՝ Արծուիկ Մինասեանի դիտարկման, թէ իրենք Աժ-էն ներս այսօր տեղի ունեցածի վերաբերեալ հաղորդում պիտի ներկայացնեն յանցագործութեան մասին, նկատեց վարչապետ Նիկոլ Փաշինեան:

Ինչ կը վերաբերի գաղտնի բանակցութիւններուն, Փաշինեան նշեց, որ ինքը որեւէ մէկու հետ գաղտնի բանակցութիւններ չի վարեր:

«Ժողովուրդն իր քուէարկութեամբ որոշել է՝ դաւաճանն ով է, անձնատուրը ով է, հողատուն ով է: Ինձ մի ստիպէք, որ պէսզի ցոյց տամ, թէ ով պիտի խորշի եւ ով է դաւաճանը՝ պետութիւնը թալանելով, ով է հողատուն, ով է անձնատուրը: Կոչ եմ անում հանդարտուել», - նշեց Նիկոլ Փաշինեան:

Արմեն Չարչեանը Կրկին Կալանաւորուեցաւ

Օգոստոս 23-ի առաւօտեան վերաքննիչ դատարանի կայացուցած կալանաւորման որոշումէն յետոյ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր, բժիշկ Արմեն Չարչեան երեկոյեան ինքնակամ ներկայացաւ «Վարդաշէն» քրէակատարողական հիմնարկ:

«Ես վստահ եւ համոզուած եմ, որ ի վերջոյ արդարադատութիւն, արդարագիտութիւնը յաղթելու են», - ըսած է ան:

Դատախազութիւնը բողոքարկած էր մօտ մէկ ամիս առաջ Երեւանի ընդհանուր իրաւասութեան դատարանի կայացուցած որոշումը, որու հետեւանքով մօտ մէկ ամիս կալանաւորուած բժիշկը ազատ արձակուած էր ՀՏԵԱՆԱԼԻ մասին ստորագրութեան եւ 15 միլիոն դրամ գրաւի դիմաց:

Դատաւոր Ռուբիկ Մխիթարեանի կայացուցած որոշումը չարուցեց մեղադրեալ Չարչեանին ու անոր պաշտպանին գայրոյթը:

Ռոպերթ Քոչարեանի գլխաւորած դաշինքով պատգամաւորի մանտաթ ստանալէն առաջ Չարչեանին մեղադրանք առաջադրուեցաւ արտահերթ խորհրդարանական ընտրութիւններուն իր աշխատակիցներուն քուէարկութեան մասնակցելու հարկադրելուն համար: 61-ամեայ Չարչեանն այդ ժամանակ կը ղեկավարէր Մայր Աթոռին պատկանող «Իգմիրլեան» բժշկական կեդրոնը եւ միայն քրէական գործի յարուցումէն յետոյ հրաժարեցաւ այդ պաշտօնէն:

Դատական նիստէն յետոյ Չարչեան «Ազատութիւն»-ի հետ գրոյցի ընթացքին գինք կալանաւորելու որոշումը քաղաքական որա-



«Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր, բժիշկ Արմեն Չարչեան

կեց. «Այստեղ գերակշռեց ոչ թէ իրաւաբանութիւնը, այստեղ իրաւաբանութիւնը ոտնակոխ արուեց, զո՞ւ տրուեց իրաւաբանութիւնը քաղաքացիական փառամոլութիւններին, ինչ-որ մարդկանց ցանկութիւններին», - ըսած է Չարչեան:

Չարչեան չի շեղուցած է անձեռնմխելիութեան՝ պատգամաւորական մանտաթի առկայութիւնը Սակայն, Գլխաւոր Դատախազութեան հաղորդեցին, որ Չարչեանին մեղադրանք առաջադրուած է, երբ ան պատգամաւոր չէր, հետեւաբար չունէր անձեռնմխելիութիւն: Երկու ամիս առաջ պատգամաւորութեան թեկնածուին մեղադրեալ ներգրաւելու եւ կալանաւորելէն առաջ դատախազութիւնը կեդրոնական ընտրական յանձնաժողովէն թոյլտուութիւն ստացած է, ինչ որ բաւարար է: Խորհրդարանի դիմելու կարիք չկայ:

Աժ Նախագահ. Լրագրողներու Տեղաշարժին Վերաբերող Փոփոխութիւնները Անվտանգութեան Համար Են

Ազգային ժողովի նախագահ՝ Ալեն Սիմոնեան լրագրողներու իրաւունքներու պաշտպանութեամբ զբաղող կազմակերպութիւններուն ներկայացուցիչներուն հետ քննարկած է Յուլիսին խորհրդարանի տարածքի եւ շէնքին մէջ գործող անվտանգութեան կանոններու լրագրողներու տեղաշարժին վերաբերող նորմերը, որոնց համաձայն պահանջող կառույցի յատուկ վերահսկելի գօտիներուն ազդեցութեամբ է հաւատարմագրուած լրագրողներուն զբաղիլ մասնագիտական գործունէութեամբ: Խօսքը, ինչպէս չի շեղուցած է Աժ լրատուականը, պատգամաւորներուն եւ աշխատակազմի աշխատակիցներուն աշխատասենեակներ տանող միջանցքներուն մասին է:

Ի պատասխան այն հարցին, որ կանոնակարգումը լրագրողներու մասնագիտական գործունէութեան խոչընդոտ կրնայ Սիմոնեան՝ Աժ նախագահ՝ Ալեն Սիմոնեան նշած է, որ անոնց բնոյթը բացառապէս անվտանգութեան նորմերէն կը բխի: Ան աւելցուցած է, որ այս պահու մասնագիտացումը կը տարուին լրագրողներու գործունէութիւնը Աժ-ի մէջ աւելի բարենպաստ դարձնելու, որպէս օրինակ բերելով տեղեկատուական ցանկացած առիթի պարագային համապատասխան բանախօսներու ապահովումը:



Ազգային ժողովի նախագահ՝ Ալեն Սիմոնեան

Աժ-ի նախագահը տեղեկացուցած է, որ օրերս լրագրողներուն հետ հանդիպման ընթացքին յայտնած է իւրաքանչիւր ամիս ձեւագրուող ունենալու յանձնարարութեան մասին:

Յիշեցնենք, որ ըստ փոփոխութիւններուն՝ խորհրդարանէն ներս լրագրողներուն կը թոյլատրուի աշխատիլ միայն նիստերու դահլիճին դիմաց գտնուող սրահը, օթեակը եւ Ազգային ժողովի այգին: Իսկ պատգամաւորներու աշխատասենեակները հասնիլ լրագրողները չեն կրնար, եթէ չունին պատգամաւորի համաձայնութիւնը:

Սուտ Մատուցուած Վերաբերեալ Գառնիկ Իսաղուլեանին Առաջադրուած է Մեղադրանք

«Ազգային Անվտանգութիւն» կուսակցութեան նախագահ՝ Գառնիկ Իսաղուլեանի կողմէ սուտ մատուցուած կատարելու եւ բռնութիւն գործադրելու կոչեր հնչեցնելու վերաբերեալ քրէական գործի նախաքննութիւնը աւարտած է, յայտնած է Յատուկ քննչական ծառայութիւնը (ՅՔԾ):

Ըստ առաջադրուած մեղադրանքին՝ Գառնիկ Իսաղուլեանը 2020 թուականի Նոյեմբեր 23-ին՝ «Հայցելի» մամուլի ակումբին մէջ ասուլիսի ժամանակ, գիտակցելով, որ իր կողմէ տրամադրուած տեղեկատուութիւնը կեղծ է, յայտնած է, թէ իբր չէ վարչապետ՝ Նիկոլ Փաշինեանը եւ վերջինիս խումբի անդամները համագործակցած են Պաքուի ու ատրպէյճանական յատուկ ծառայութիւններուն հետ, թուրքիայէն ու Ատրպէյճանէն ստացած են 48 միլիոն տոլար եւ նշուած գումարով 2018-ին չէր մէջ յեղափոխութիւն իրագործած:

Բացի այդ, նոյն ասուլիսի ժամանակ ան յայտնած է, թէ իբր Ազգային Անվտանգութեան Ծառայութեան նախկին տնօրէն՝ Արգիշտի Քեարամեան իր նշանակած անձնագրային բաժանմունքներու պետերու միջոցով 1400 հայկական անձնագիրներ բաժնած է հայերէնին տիրապետող ատրպէյճանցիներու, որմէ յետոյ վերջիններս մտած են Քաջարան եւ զայցած Արցախ:

Այնուհետեւ Գ. Իսաղուլեանը 2020-ի Դեկտեմբեր 13-ին «168.am» լրատուական կայքին մէջ, իսկ Դեկտեմբեր 14-ին՝ «Հայցելի» մամուլի ակումբի ասուլիսներու ժամանակ, դարձեալ գիտակցելով, որ իր կողմէ տրամադրուած տեղեկա-



«Ազգային Անվտանգութիւն» կուսակցութեան նախագահ՝ Գառնիկ Իսաղուլեան

տուութիւնը կեղծ է, յայտնած է թէ իբր Արցախի անվտանգութեան խորհուրդի նախկին քարտուղար՝ Սամուէլ Բաբեանը կազմակերպած է նախկին բարձրաստիճան պաշտօնատար անձանց, ինչպէս նաեւ Արցախի թեմի առաջնորդ՝ Պարգեւ Սրբազանի նկատմամբ սպանութեան նախապատրաստութիւն՝ այդպիսով Սամուէլ Բաբեանին ուղղակի դիտաւորութեամբ յանրաւի մեղադրելով առանձնապէս ծանր յանցագործութեան մէջ:

Բացի այդ, Գ. Իսաղուլեանը հրապարակային Youtube-ով 2020 թուականի Դեկտեմբեր 22-ին հնչեցուցած է վարչապետ՝ Նիկոլ Փաշինեանի նկատմամբ բռնութիւն գործադրելու կոչեր՝ նշելով, որ վարչապետին ֆիզիքապէս ոչնչացնող պէտք է ստանայ ազգային հերոսի կոչում եւ 1 միլիոն տոլար պարգեւավճար:

ԼՈՒՐԵՐ

Լին Թրեյսի - «Հակամարտութիւնը Կարգաւորուած Չէ, Քանի Դեռ Որոշուած Չէ Լեռնային Ղարաբաղի Կարգավիճակի Հարցը»



Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան՝ Լին Թրեյսի

Միացեալ Նահանգները կրկին անգամ զարաբաղեան հարցը բանակցութիւններով լուծելու կոչ ըրած է այս անգամ բարձրացնելով նաեւ Ղարաբաղի կարգավիճակի հարցը:

«Վերջին պատերազմի հետեւանքները յաղթահարուած չեն, հակամարտութիւնը կարգաւորուած չէ, քանի որ դեռ որոշուած չէ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը», Միւնիքի մարզայցելութեան ընթացքին յայտարարած է Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան՝ Լին Թրեյսին:

«Մենք պիտի աշխատինք որպէս Միւնիքի խումբի համանախագահ՝ այդ դիրքերէն ձգտելով իրավիճակի ապամազլցման եւ միջադէպերու նուազեցման, որպէսզի հնարաւոր ըլլայ դիտարկել մնացեալ հարցերը՝ պատերազմի հետեւանքներու վերացումն ու միւս խնդիրներու վերջնական կարգա-

ւորումը: Մենք կը կարծենք, որ հակամարտութիւնը դեռ լուծուած չէ, քանի որ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը դեռ որոշուած չէ», - նշած է դեսպանը:

ԱՄՆ-ի դեսպանը Միւնիքին մէջ լրագրողներու հետ գրոյցին ընթացքին արձագանքած է նաեւ անվտանգութեան ու սահմանային միջադէպերուն վերաբերող հարցին, կոչ ըրած է «իրավիճակի ապամազլցման եւ որ վերջ տրուի բռնութիւններուն»:

«Խնդիրներու լուծումը այնչափ կարեւոր է յատկապէս այն պատճառով, որ քաղաքացիական անձինք կը յայտնուին հակամարտութեան մէջ եւ անոնց անվտանգութիւնն ու ապահովութիւնը կը վտանգուին, ուստի, այս ամէնը հաշուի առնելով, այդ հարցերու լուծումը հրատապութիւն ձեռք կը բերէ», - «Արմէնիա Էյթ»-ի հաղորդմամբ՝ ըսած է դեսպան՝ Թրեյսին:

Արարատ Միրզոյեան Նշանակուեցաւ Հայաստանի Արտաքին Գործոց Նախարար

Ազգային Ժողովի նախկին նախագահ՝ Արարատ Միրզոյեան նշանակուեցաւ Հայաստանի արտաքին գործոց նախարար:

Արարատ Միրզոյեանը 42 տարեկան է, նախորդ՝ 7-րդ գումարման Ազգային Ժողովի նախագահն էր, մինչ այդ՝ Հայաստանի առաջին փոխվարչապետը, 2018 թուականի թաւաշէյ յեղափոխութենէն առաջ՝ խորհրդարանի «Ելք» ընդդիմադիր խմբակցութեան պատգամաւոր: «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութեան հիմնադիր անդամ է, 2016 թուականէն մինչ օրս կուսակցութեան վարչութեան մէջ է: Պատմական գիտութիւններու թեկնածու է, Երեւանի Պետական համալսարանի պատմութեան ֆակուլտետէն բացի աւարտած է նաեւ Պետական կառավարման ակադեմիան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանութեան թանգարանի հիմնադրի յետ աւարտականը:

Հայաստանի արտաքին գործոց նախարարի պաշտօնը թափուր էր Մայիսի վերջէն, երբ Արա Ալվազեան հրաժարական ներկայացուց:



Արտաքին գործոց նախարար՝ Արարատ Միրզոյեան

Մինչ օրս արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարի պարտականութիւնները կը կատարէր Յուլիսի կէսերուն նախարարի առաջին տեղակալ նշանակուած Արմէն Գրիգորեան, որ ազատուած էր Անվտանգութեան Խորհուրդի քարտուղարի պաշտօնէն:

Գրիգորեան վարչապետի ստորագրած որոշմամբ վերստին նշանակուեցաւ Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար:

Պաշտպանութեան Նախարար. Ձեռք Պիտի Բերենք Արդիական Ձեւեր



Նախարար՝ Արշակ Կարապետեան «Արմիա 2021» ռազմարդիւնաբերական ցուցահանդես այցելութեան ընթացքին

Հայաստան հրաժարած է հին սպառազինութիւն ձեռք բերելէ, Օգոստոս 24-ին Ռուսաստանի մէջ յայտարարած է ՀՀ պաշտպանութեան նախարար՝ Արշակ Կարապետեան:

«Գործնական քայլեր ենք անելու մեր համագործակցութիւնը Ռուսաստանի հետ զարգացնելու ուղղութեամբ, մենք ծրագրում ենք ունենալ որակով սպառազինութիւն, մենք ծրագրում ենք ունենալ նոր սպառազինութիւն, մենք հրաժարուել ենք հին սպառազինութիւններ ձեռք բերելուց, դա մեր քաղաքականութիւնն է: Աւելի լաւ է՝ մենք ունենանք քիչ, բայց որակով եւ յստակ իմանանք, որ այդ սպառազինութիւնը գործելու է», - շեշտած է ան լրագրողներու հետ ձեռնպահարկի ընթացքին:

Մէկ այլ խնդիր եւս նախարարը մատնանշած է. «Մենք պէտք է փորձենք ունենալ սեփական զէնքի պրտադրութիւնը», - նշած է Կարապետեան՝ պնդելով, թէ այստեղ եւս կայ աջակցութիւն՝ համատեղ ձեռնարկութիւններու բացման տեսքով:

«Արագ դա անելու ենք, մենք՝ որպէս ազգ, պէտք է կարողանանք արտադրել սեփական զէնք», - շեշտած է նախարարը:

Ըստ նախարարին՝ ուրիշ խնդիր մըն ալ պէտք է լուծել՝ թոյլ չտալ, որ ՊՆ-ի եւ արտադրող ձեռնարկութիւններու միջեւ ըլլան միջնորդներ: Անոր կարծիքով՝ այս երեք պայմաններու պահպանման պարագային կ'ունենանք արդիականացուած բանակ. «Եւ կարողանալու ենք դիմակայել մեր հանդէպ առկա վտանգներին»:

Հայաստանի պաշտպանական գերատեսչութեան ղեկավարը աշխատանքային այցով Ռուսաստան կը գտնուի: Ան ներկայ եղած է «Փաթրիոթ» կեդրոնի մէջ կատարուող «Արմիա 2021» ռազմարդիւնաբերական համաժողով-ցուցահանդեսին: Պաշտպանութեան նախարարը, ըստ նախարարութեան հաղորդման, նաեւ աշխատանքային շարք մը հանդիպումներ ունեցած է ռազմարդիւնաբերական ընկերութիւններու ղեկավարներուն հետ:

Փութին եւ Մաքրոն Քննարկած Են Հայ-Ատրպէյճանական Սահմանի Լարուածութիւնը

Ֆրանսայի եւ Ռուսաստանի առաջնորդները հեռախօսազրոյց ունեցած են, որու ընթացքին քննարկած են նաեւ զարաբաղեան խնդիրը:

«Վլատիմիր Փութինը, նախագահ էմմանուէլ Մաքրոնի խնդրանքով, ներկայացուցած է Լեռնային Ղարաբաղի շուրջ Նոյեմբեր 9-ին եւ Յունուար 11-ին ձեռք բերուած եռակողմ համաձայնութիւններու կատարման ընթացքը», - հաղորդած է Ռուսաստանի նախագահական նստավայրը:

Ու թէեւ հայ-ատրպէյճանական սահմանին կրակոցները քանի մը շաբաթ է, որ չեն դադարիլ եւ երկու կողմէն էլ կան զոհեր ու վիրաւորներ, Քրեմլինը պնդած է, որ Մաքրոնի եւ Փութինի զրոյցի ընթացքին «արձանագրուած է, որ տարածաշրջանին մէջ իրավիճակը ընդհանուր առմամբ կայուն է»:

Էլիզէ պալատը, մինչդեռ, այլ գնահատական տուած է, ընդգծելով. - «Նախագահ Մաքրոնը մտահոգութիւն յայտնած է Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ

լարուածութեան վերսկսման կապակցութեամբ»:

Վլատիմիր Փութինը, իր հերթին, հաղորդած է Մաքրոնին, թէ «քայլեր կը ձեռնարկուին Հարաւային Կովկասի մէջ տնտեսական ու փախադրային կապերը վերականգնելու եւ բնակչութեան մարդասիրական կարիքները հոգալու ուղղութեամբ», - նշած է Ռուսաստանի նախագահական նստավայրը՝ առանց յաւելեալ մանրամասնութիւններու:

Էլիզէ պալատը հաղորդած է, որ երկու նախագահները վերահաստատած են Միւնիքի խումբի առաւել մեծ դերակատարութեան հասնելու իրենց միասնական յանձնառութիւնը, որու նպատակն է յանգիլ տեւական լուծումներու՝ անցեալ տարուայ պատերազմէն ու Նոյեմբեր 9-ի եռակողմ համաձայնութիւններէն յետոյ:

Այս տեսակէտը կը պաշտպանէ նաեւ միջնորդական խումբի երրորդ համանախագահ Երկիրը՝ Միացեալ Նահանգները, միջնորդներու այս յորդորները, սակայն, առայժմ հական արդիւնք չեն տուած:

ՄԴՀԿ Կեդրոնի Անդամներու Յանդիպումները Յայաստանի Մէջ

Շարունակուած էջ 1-էն


չիկ Քեչիշեանը եւ Հայաստանի վարչութեան ատենապետ՝ Սեդրակ Աճէմեանը:

Ողջունելով ՄԴՀԿ ներկայացուցիչները՝ վարչապետ Փաշինեան նշեց.

Ողջունում եմ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան պատուիրակութեանը եւ շատ ուրախ եմ այս առիթի համար: Մենք միշտ կապի մէջ ենք եղել կուսակցութեան հետ՝ եւ կեդրոնական մարմնի, եւ Հայաստանեան մարմնի: Ուրախ եմ արձանագրել, որ կուսակցութիւնը՝ նաեւ Հայաստանեան կազմակերպութիւնը մասնակցում է արտախորհրդարանական ուժերի նոր ձեւաւորուած ձեւաչափին, որտեղ մենք արդէն երկու հանդիպում ենք ունեցել: Նաեւ փորձում ենք այնպէս անել, որ որոշումներ ընդունենք եւ յստակ քայլերով առաջ շարժուենք: Ի հարկէ, այս համագործակցութիւնը եւ երկխօսութիւնը շատ կարեւոր է մեզ համար՝ հաշուի առնելով կու-

ուսակցութեան ուղղուած մօտեցումները եւ խորհրդարանական, եւ արտախորհրդարանական ձեւաչափով, կը կարծենք, որ շատ ճիշդ են: Որովհետեւ եթէ նախապէս միասնականութեան, համագործակցութեան եւ համերաշխութեան մասին կոչերը ցանկութիւններ էին, այսօր ուղղակի բացարձակ անհրաժեշտութիւն են, որովհետեւ եթէ մենք համագործակցաբար, միասնականութեան միջոցառումներ մէջ չկարողանանք աշխատիլ, շատ դժուար պիտի ըլլայ ապագան: Որպէս կուսակցութիւն միշտ պատրաստակամ եղած ենք, այսօր ալ պատրաստակամ ենք ձեր հետ համագործակցելու բոլոր ոլորտներուն մէջ՝ Սփիւռքի եւ հայրենիքի մէջ: Նաեւ կը կարեւորենք այս պահուն իսկապէս համագործակցութիւնը բոլոր ուժերուն հետ, որովհետեւ ատիկա կ'երեւի միակ ձեւն է, որով կարողանանք մեր հայրենիքն ու Արցախը այս ծանր իրավիճակէն դուրս հանենք»:

ՄԴՀԿ պատուիրակութեան անդամներուն կողմէ ընդգծուեցաւ



սակցութեան շատ կարեւոր եւ բացառիկ դերը Սփիւռքի մեր համայնքներում, ներգրաւուածութիւնը եւ ներդրումն ընդհանրապէս հայ ժողովրդի քաղաքական մշակոյթի ձեւաւորման գործում:

Մենք միշտ բաց ենք եղել երկխօսութեան համար, եւ ուրախ եմ, որ նոյնպիսի պատրաստակամութիւն կայ նաեւ ձեր կողմից: Այս հանդիպումները լաւ առիթ են, որպէսզի տեղի ունեցած արտահերթ խորհրդարանական ընտրութիւններին յետոյ ճշգրտենք մեր օրակարգը, մտքեր փոխանակենք առաջիկայ անելիքների վերաբերեալ, գոցեց նաեւ անհրաժեշտութեան դէպքում կայացնենք յստակ որոշումներ: Կրկին ողջունում եմ ձեզ եւ ուրախ եմ այս առիթի համար»:

ՄԴՀԿ Կեդրոնական վարչութեան ատենապետ՝ Համբիկ Սարաֆեան իր պատասխան խօսքին մէջ ըսաւ. «Ծնորհակալ ենք, պարոն վարչապետ: Մենք շնորհակալ ենք, որ կը հիւրընկալէք մեզ այստեղ: Նախ թող տուէք, որ համայն Հնչակեան ընտանիքի անունով շնորհաւորեմ ձեզ՝ վերանշանակման առիթով: Մեր պատմութեան կ'երեւի ամենաճակատագրական շրջանին, անշուշտ, դուք մեզմէ բոլորէն լաւ կը պատկերացնէք եւ տեղեակ էք բոլոր մարտահրաւերներուն մասին եւ ներքին, եւ արտաքին: Ինչպէս տեսնեք, նաեւ ընտրութիւններէն յետոյ ձեր կատարած քայլերը, մասնաւոր միասնականութեան եւ համախմբ-

վարչապետ Փաշինեանի՝ արտախորհրդարանական ուժերուն հետ նախաձեռնած երկխօսութեան եւ փոխգործակցութեան կարեւորութիւնը ի շահ հայրենիքին: Վարչապետը նշած է, որ Հայաստանն ու Արցախը կ'անցնին ծանր փորձութիւններու միջով, բայց կարեւորը այն է, որ ընդհանուր ըմբռնում ձեւաւորուած է առկայ մարտահրաւերները յաղթահարելու եւ համատեղ ջանքերով առաջանալու շուրջ: Նիկոլ Փաշինեանի խօսքով՝ արտախորհրդարանական ձեւաչափով արդէն իսկ տեղի ունեցած երկու հանդիպումը, ուր ներգրաւուած է նաեւ ՄԴՀԿ Հայաստանեան կազմակերպութիւնը, կը վկայեն այդ ձեւաչափի գործուն ըլլալու մասին եւ շարունակական բնոյթ կրելու:

Վարչապետը Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան պատուիրակութեան հետ քննարկեց Հայաստան-Սփիւռք-Արցախ կապերու ամրապնդման եւ առկայ ներուժի լիարժէք օգտագործման վերաբերող հարցեր: Զրուցակիցները մտքեր փոխանակած են տեղեկատուական արհեստագիտութեան, կրթութեան, միջուկային բժշկութեան եւ շարք մը այլ ոլորտներու աշխուժացման հեռանկարներու շուրջ, նաեւ խօսած են զարգացման ծրագրերներու եւ նախաձեռնութիւններու մասին:

Յանդիպում Աժ Նախագահ Ալան Սիմոնեանի Յետ
ՀՀ ԱԺ նախագահ՝ Ալեն Սիմոնեան Օգոստոսի 11-ին հիւրըն-

կայեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչներ՝ Կեդրոնական վարչութեան ատենապետ՝ Համբիկ Սարաֆեանը, Կեդրոնական վարչութեան անդամ՝ Խաչիկ Քեչիշեանը եւ Հայաստանի վարչութեան ատենապետ՝ Սեդրակ Աճէմեանը:

թեան անդամ՝ Խաչիկ Քեչիշեանը: Հանդիպումը ընթացաւ տարբեր հարցերու վերաբերեալ բովանդակալից քննարկումներու ձեւաչափով: Հիմնադրամի գործադիր տնօրէն՝ Հայկակ Արշամեան ներկայացուց Արցախի եւ Հայաստանի շարք մը մարզերու մէջ



Հանդիպման ընթացքին Խորհրդարանի ղեկավարը կարեւորեց կուսակցութեան մասնակցութիւնը արտախորհրդարանական ուժերու միջոց ձեւաւորուած համագործակցութեան նոր ձեւաչափին: Ալեն Սիմոնեան արժեւորեց ՄԴՀ կուսակցութեան հետ փոխգործակցութիւնը՝ այդ շրջանին ներս առանձնացնելով Սփիւռքի հայ համայնքներու վերջինիս ունեցած դերակատարութիւնը:

կատարուող բնակարանաշինութեան, ենթակառուցումներու վերականգնման եւ զարգացման, կրթական հաստատութիւններու բարեկարգման եւ ընկերային բնոյթի ընթացիկ ծրագրերը: ՄԴՀ ներկայացուցիչներուն կողմէն ընդգծուած է Հայաստան-Սփիւռք-Արցախ կապերու ամրապնդման եւ առկայ ներուժի լիարժէք օգտագործման կարեւորութիւնը՝ ի շահ Հայրենիքի զարգացման եւ շնացման:

ՄԴՀ Կեդրոնական վարչութեան ատենապետ՝ Համբիկ Սարաֆեան, անդրադառնալով Հայաստանի յետպատերազմեան իրավիճակին ու երկրի ապագային, կարեւորած է օրէնսդիր մարմնի գործունէութիւնը, առաջիկային ընդունուելիք օրէնքներն ու որոշումները:

ՄԴՀ-ն միշտ իր ներկայացուցիչը ունեցած է Հիմնադրամի Հոգաբարձուներու խորհուրդի կազմէն ներս եւ զգալի մասնակցութիւն ունեցած է հայրենիքին առջեւ ծառայած մարտահրաւերներու յաղթահարման գործով:

«Կողմերը քննարկեցին երկրի ներքաղաքական իրավիճակին վերաբերող հարցեր. արտաքին մարտահրաւերների յաղթահարման տեսանկիւնից առանցքային համար-

Այցելութիւն Եռաբլուր
Օգոստոս 13-ին, ՄԴՀ Կեդրոնական վարչութեան պատուիրակութիւնը այցելեց Եռաբլուր յարգանքի տուրք մատուցելու բոլոր



ուեց քաղաքական ուժերի միասնականութիւնը՝ անկախ ունեցած տարակարծութիւններից»,- յայտնած են ՀՀ ԱԺ-էն:

հերոսներին յիշատակին եւ մասնաւորապէս Արցախեան վերջին պատերազմին ինկած նահատակներուն:

Հանդիպման ընթացքին անդրադարձած են նաեւ Հայաստան-Սփիւռք կապերու ամրապնդման:

Այդ առիթով, ՄԴՀ Կեդրոնական վարչութեան ատենապետ՝ ընկ. Տօքթ. Համբիկ Սարաֆեան նկատել տուաւ, որ հակառակ թարմ շիրիմներու ճնշող տեսարանին, վեհութեան եւ պատկառանքի շունչ կար այնտեղ եւ այսօր կարելի է հաստատել, որ Եռաբլուր ինքնին ուխտատեղի դարձած է, ուր պէտք է այցելել իւրաքանչիւր հայ, մանաւանդ նոր սերունդը, նախ ոգեկոչելու մեր հերոսներուն յիշատակը եւ ոգեշնչուելու անոնց անձնագործութեան գերագոյն դրսեւորումէն:

Այցելութիւն «Յայաստան» Յիմնադրամի Գրասենեակ
Օգոստոս 12-ին, «Հայաստան» համահայկական հիմնադրամը հիւրընկալեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչներ՝ Կեդրոնական վարչութեան ատենապետ՝ Համբիկ Սարաֆեանը եւ Կեդրոնական վարչու-

Ժողովուրդին Զեռ. Զայրենիքին Զամար

Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան պատուիրակութեան անդամները Հայաստան եւ անոր հանդիպումները Հայրենի վերընտրի ղեկավարութեան հետ, բնականաբար, փափկավարական այցելութեան սահմաններէն անդին գացող քաղաքական քայլեր էին: Հայաստանի ներքաղաքական կեանքի ներկայ փոթորկալոյց օրերուն, նման որոշում մը զգացականէ աւելի քաղաքական դիրքորոշման մը յատակ արտայայտութիւնն էր, որ իր դրական արձագանգը ունեցաւ հայրենի իշխանութիւններուն մօտ:

2018-ի յեղափոխութենէն ետք, երբ ժողովուրդի մեծամասնութեան ձայնը եղաւ լսելի եւ կամքը անկաշկանդ, լաւատեսական շունչ մը պարուրեց շատերը, որոնց մէջ Հնչակեանները: Ակնբախ էր, որ մինչ այդ, քան տարիներու ամենաթողութեան, միահեծանութեան եւ սարսփատիրութեան մթնոլորտը ծանրորէն կրած էր քաղաքացիներու ուսերուն, յուսահատութեան մուսլ ամպերը մարդիկը կը մղէին հայրենալքումի եւ հիասթափութեան, չարաշահումները հասած էին ծայրայեղ չափերու՝ թաքուն ցասումով տրամադրելու անտեսած խաւերը զանգուածներուն:

Այս պայմաններու տակ էր որ կը ժայթքէր յեղափոխութիւնը, արմատապէս նոր իրավիճակ ստեղծելով հայրենի իրականութեան դիմաց: Յեղափոխութեան զօրակցութիւնը եւ անոր հանդէպ համակրական մօտեցումները առաջին իսկ օրէն եղաւ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան քաղաքականութիւնը:

Անկէ ետք, երբ յեղափոխութեան ընթացքը կ'ընթանար դողդոջ քայլերով, բազում խճճուած

հանգոյցներ կը յայտնուէին պետական նորարարութիւնը ղեկավարող Ապա, արցախեան ճակատին վրայ հրադադարին կողմէ խախտումը եւ այնուհետեւ լայնածաւալ պատերազմը տրամազծօրէն շրջեցին ամէն ինչ: Պատերազմին պիտակի հետեւանքները ծանր հետքեր թողուցին մեր ժողովուրդին վրայ, իր բոլոր առումներով՝ մարդկային, տարածքային, ռազմական, բարոյական եւ այլն: Զգլխիչ հարուած մըն էր պատահածը, որուն կոտորածը ցաւը պիտի չմեղմանայ երբեւիցէ:

Արցախեան ճակատին վրայ գահավէժ անկումը, անշուշտ, իր բացասական ազդեցութիւնը ունեցաւ Հայաստանի ու հայ ժողովուրդին վրայ: Դուրս թափող գայլոյթն ու ընդվզումը, թէեւ հասկնալի էին, սակայն անոնց չափազանցումը սկսաւ հասնիլ վտանգաւոր աստիճաններու: Միւս կողմէ, թշնամի պետութեան նախագահը, պահը յարմար նկատելով ոչ միայն չարախնդաց, այլեւ՝ հոգեբանական ճնշումներու ենթարկեց մեզ՝ իր մերթ հեզմական եւ մերթ սպառնական սանձարձակ արտայայտութիւններով: Այս աւելի հրահրեց Հայաստանի ներքաղաքական կեանքը, որուն դերակատարները փոխանակ համախմբուելու պետականութեան եւ բանակին շուրջ, աստիճանաբար ամոքելու վերքերը, սկսան ինչպէս գործողութիւններով ապակայունացնել դրութիւնը: Ո՞րն էր լուծումը:

Լուծման ձեւը դարձեալ տրուեցաւ ժողովուրդին, այսինքն՝ ընտրութիւններու միջոցաւ նորովի կազմել իշխանութիւնները՝ օրէնսդիր եւ գործադիր: Սա տրամաբանական միջոց մըն էր, որ կարելի չէր առարկել: Թող ժողովուրդը իր

քուէներով վստահութիւն յայտնէ անոնց՝ որոնց կ'ապաւինի ան: 20 Յունիսին էր այդ վճռական ժամադրութիւնը: Սկզբունքը յստակ էր՝ «Զայն բազմաց, ձայնն Աստուծոյ»:

Եւ քուէատուփերէն դուրս եկած արդիւնքները տուին բարդ հարցումին պատասխանը եւ միաժամանակ նոր հնարաւորութիւն մը սրբազրուելու նախկին թերիները, բացթողումներն ու սայթաքումները:

Ասկէ ետք ի՞նչ: Դարձեա՞լ ափեղցփեղուցիւններ, անհարկի վարկաբեկումներ կամ պատկերաւոր լիշոցներ՝ իրենց ողջ տգեղութեամբ, բարոյացրկութեամբ եւ անամօթութեամբ: Թէ՛ անցնիլ գործի, շինարար աշխատանքի եւ լաւատեսական ծրագիրներու: Ի վերջոյ, մարդիկ ե՞րբ պիտի համոզուին, որ ժողովուրդին է տէրը հայրենիքին, ժողովուրդին քուէն է որոշողը հայրենիքի վաղուան օրուան:

Այս կառուցողական սկզբունքէն մեկնած էր որ Հնչակեան Կուսակցութիւնը պաշտօնապէս ողջունեց ժողովուրդին ազատ կամքով ստեղծուած Ազգային ժողովը, ընտրուած վարչապետն ու հայրենի դեկավարութեան ուղեգիծը: Ի հարկէ, հոն ո՛չ կատարելութիւն պէտք է փնտռել եւ ո՛չ ալ անսխալականութեան յաւակնութիւն, այլեւ՝ դժուարութիւններով լեցուն իրականութիւն մը որ պիտի յաղթահարենք միահամուռ ջանքերով: Աղմկարարութիւնն ու կեղծ հայրենասիրական բռնկումները, աւելորդապաշտական կարգախօսները եւ չարամիտ սլաքները կը վնասեն ընդհանուր գործին: Եթէ երկիրը կաղայ, ի վերջոյ ո՞վ կ'ընայ ըլլալ շահաւորը, եթէ ոչ՝ թշնամիները մեր ծանօթ եւ մրցակիցները անծանօթ: Ինչո՞ւ առիթ տալ չարակամ մարդկանց թունաւորելու մեր կեանքը:

Ժողովուրդին հետ, հայրենիքին համար,- ահա այն կարգախօսը որ անցեալին եղած է

Եւ այսօր ալ կը մնայ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան սկզբունքը: Այս սկզբունքով է որ կ'առաջնորդուինք՝ հեռու աթոռապաշտութենէ թէ մնամէջ յաւակնութիւններէ: Ժողովուրդը թող որոշէ իր ուղին եւ մենք կը մնանք զօրավիգ անոր: Բռնանալու ամէն փորձ ժխտական հետք կը թողու ժողովուրդի ուժին ու կամքին վրայ: Ցաւ ի սիրտ, դատապարտելիօրէն վերջին շրջանին շատ շատերու մօտ նկատեցինք ժողովուրդին որոշումը վիրաւորելու, պիտակաւորելու վարկաբեկիչ եզրոյթներ: Եւ երբեմն անոնց կողմէ՝ որոնք յաճախ հանդէս կու գան ժողովուրդին անուկով. ի՞նչ հեզմանք:

Այսօր, երբ բաւականին բիւրեղացած է պատկերը հայրենի քաղաքական կեանքին, երբ մեկնարկած է նոր ընթացք մը որոշակիօրէն յուսալի, կը մնայ բոլորով ժողովուրդի որոշումին, պետականութեան, բանակին շուրջ եւ ձեռք մեկնել այդ կառուցներուն կազդուրուելու եւ թարմանալու համար: Այս առումով, Հնչակեաններու մօտեցումը աներբ է եւ նպատակաւոր:

Կը սիրենք յուսալ, որ ժամանակը կը մեղմացնէ կիրքերը, կը զսպէ խախտուած յոյզերը եւ բանականութեամբ ու առողջ դատողութեամբ ազգային բոլոր հատուածները կը հաւատան ու կը գործեն՝ «Ժողովուրդին հետ եւ հայրենիքին համար» ոսկէ կանոնով:

Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան պատուիրակութեան քայլն ու կուսակցութեան մօտեցումը յուսանք լիչեցում եւ ահագանգ կը դառնան զառաժեպակներու եւ մոլորեալներու համար:

«ԱՐԱՐԱՏ» ԼԻԲԱՆԱՆ

Ծեծկռտուք Ազգային Ժողովէն Ներս

Շարունակուած էջ 1-էն

սահմանակից երկիրներու հետ յարաբերութիւններու խորացումը եւ կարգաւորումը արտաքին քաղաքականութեան կարեւոր ուղղութիւններէն պիտի ըլլայ:

«Թշնամութեան խորացումը սպառնալիք է տարածաշրջանի կայունութեան եւ անվտանգութեան համար, թշնամութեան յաղթահարումը կարող է դառնալ տարածաշրջանային արտաքին քաղաքական օրակարգի առանցք», - մասնաւորապէս ըսաւ Փաշինեան:

Արտաքին քաղաքականութեան անդրադառնալով Փաշինեան նախ խօսեցաւ Ռուսաստանի հետ յարաբերութիւններու մասին՝ ընդգծելով, որ ռուս խաղաղապահները այսօր Լեռնային Ղարաբաղի մէջ անվտանգութեան երաշխիք են, եւ Հայաստանը պիտի շարունակէ ամրապնդել եւ ընդլայնել Ռուսաստանի հետ ռազմական, տնտեսական եւ քաղաքական յարաբերութիւնները:

Ուշագրաւ էր Փաշինեանի յայտարարութիւնը այն մասին, որ ռուս խաղաղապահներու դէմ Ատրպէյճանի մէջ հուժկու հակաբարոյչութիւն կը տարուի: Ընդգծեց, որ Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութենէն ետք գերեզմարուած եւ ատրպէյճանական դատարաններու կողմէ ազատագրկման դատապարտուած հայ զինուորականները գերեզմարուած են, երբ տարածքը ռուս խաղաղապահներու հսկողութեան տակն էր. «Եթէ այս փաստը հա-

մադրում ենք այն իրողութեան հետ, որ Ատրպէյճանը մինչեւ օրս չի ստորագրել խաղաղապահների մանտաթը, ակնյայտ է դառնում, որ սա խաղաղապահների, այսինքն՝ Լեռնային Ղարաբաղի եւ Լեռնային Ղարաբաղում կայունութեան եւ խաղաղութեան դէմ իրականացուող գործողութիւնների շարք է»:

Փաշինեան նաեւ Արեւմուտքին հետ Հայաստանի ամուր կապերու մասին խօսեցաւ. Միացեալ Նահանգներու եւ ԵՄ-ի, Ֆրանսայի հետ արդիւնաւէտ համագործակցութեան օրինակներ թուեց: Ընդգծեց, որ Հայաստան-Միացեալ Նահանգներ յարաբերութիւնները բարձրացած են ռազմավարական երկխօսութեան մակարդակի:

3 ժամ ընթացող ելոյթով անդրադարձ կատարեց Հայաստանի գարգացման համար բոլոր ոլորտներուն մէջ ակնկալուող ծրագիրներուն՝ կրթութիւն, մշակոյթ, տնտեսութիւն եւ մարզանք:

Ընդդիմադիր պատգամաւորներու հարցերը, սակայն, անվտանգութեան խնդիրներուն կ'առնչուէին: Անոնց մեծ մասը, այդուհանդերձ ոչ թէ ապագայի, այլ անցեալի կորուստներու մասին էր:

Իրարանցում սկսաւ ընդդիմադիր «Պատիւ ունեմ» խմբակցութեան պատգամաւոր՝ Աննա Մկրտչեանի՝ Փաշինեանին ուղղած վիրաւորանքներով ու հեզմանքով համեմուտած հարցի պատճառով: Աժ-ի նախագահ՝ Արեւ Միմոնեան որոշեց դուրս հրակրել Մկրտչեանը նիստերու դահլիճէն, իսկ անվ-

Կառավարութեան Ծրագիրը

Շարունակուած էջ 1-էն

մի ներկայացուցիչներուն:

Ինչ կը վերաբերի բուն հարցին՝ Կառավարութեան յառաջիկայ հնգամեայ ծրագիրին, հոն ամենէն ուշագրաւ դրոյթներէն մին արտաքին հետախուզական ծառայութիւն ստեղծելու մասին էր: Վերջին պատերազմը եկաւ ցոյց տալու որ, թշնամին աւելի շատ տեղեկութիւն ունէր Հայկական դիրքերու ու կարողութիւններու մասին, քան Հայաստանը Ատրպէյճանի մասին: Արտաքին հետախուզական ծառայութիւնը կրնայ դառնալ այն գործիքակազմը, որու միջոցաւ կարելի կ'ըլլայ տեղեկութեան շտեմարան ունենալ գլխաւոր երկու հակառակորդներուն՝ Ատրպէյճանի ու Թուրքիոյ մասին ու նախապատրաստուիլ Հայաստանի դէմ անոնց յաջող քայլերուն:

Կառավարութիւնը կը խոստանայ նաեւ նուազագոյն աշխատավարձը դարձնել 85 հազար դրամ, կառուցել եւ կամ նորոգել 300 դպրոց ու 500 մանկապարտէզ:

Կառավարութեան ծրագրի կարեւոր նպատակներէ մէկն է շրջել Հայաստանի ժողովրդագրական պատկերը՝ բարձրացնելով ծնելիութեան մակարդակը: Այս նպատակը իրագործելու համար բոլոր ընտանիքներու իւրաքան-

չիւր երրորդ եւ աւելի երեխան՝ մինչեւ վեց տարեկան, ամէն ամիս պիտի ստանայ 50 հազար դրամ: Ծրագրով կը նախատեսուի նաեւ մինչեւ 2026 երկրի աղքատութեան մակարդակը նուազեցնել գրեթէ կրկնակի՝ զայն հասցնելով 10 տոկոսի շեմին:

Այս կարեւորագոյն հարցերը ձգած, խորհրդարանէն ներս յայտնուած են մարդիկ, որոնք կը շարժին «որքան վատ, այնքան լաւ» սկզբունքով: Շարունակուող այս ապառոջ մթնոլորտը անկասկած նողկանք կը յառաջացնէ շատ մը քաղաքացիներուն մօտ, երբ անոնք ակամատես կ'ըլլան երեւոյթներու, որոնք խորք են Հայաստանի քաղաքական մշակոյթին: Նման իրավիճակի շարունակութիւնը յուսալքութեան կը մատուցէ ժողովուրդը ու կը վնասէ երկրի յառաջիկայ զարգացման:

Թաւշեայ յեղափոխութեան ընձեռած ազատութիւններու չարաշահումը կը ստիպեն իշխանութիւններուն իրենց կարգին դիմելու հակաքայլերու, որոնք ուշ թէ կանուխ կրնան տանիլ դէպի նահանջ՝ ժողովրդավարութեան սկզբունքներէն: Ընդդիմութեան ուսերուն կ'իյնայ իջեցնել ջերմաչափը ու չնդել իշխանութեան հասնելու հոգ, ուր վնասով դուրս կու գանք ազգովին:

«ՄԱՍԻՍ»

տանգութեան աշխատակիցներու դահլիճ մուտք գործելէն յետոյ ձեռնկառնուք սկսաւ: Միայն 20 րոպէ

ընդմիջումէ ետք համեմատաբար խաղաղ պայմաններով նիստը շարունակուեցաւ:

Գլխավոր Հիւպատոս Բայբուրդեանը Փոլ Գրիգորեանին Յանձնեց Հայաստանի Երախտագիտութեան Մետալ



Օգոստոս 19-ին Լոս Անձելոսի մէջ ՀՀ գլխավոր հիւպատոս, արտակարգ եւ լիազոր դեսպան Արմէն Բայբուրդեանը Լոս Անձելոսի քաղաքային խորհրդի անդամ Փոլ Գրիգորեանին յանձնեց ՀՀ բարձրագոյն պարգևներէն մէկը հանդիսացող Երախտագիտութեան մետալ՝ ՀՀ վարչապետի ներկայացումով ՀՀ նախագահի կողմէ շնորհուած: Պարգևատրման արարողութիւնը տեղի ունեցաւ Լոս Անձելոսի քաղաքապետարանի նիստերու դահլիճին մէջ: «Երկարամեայ հայապատ գործունէութեան, հայամերիկեան բարեկամական կապերու ամրապնդման եւ զարգացման գործին մէջ ներդրած նշանակալի աւանդի համար Լոս Անձելոսի քաղաքային խորհրդի անդամ Փոլ Գրիգորեանին պարգևատրած էր Երախտագիտութեան մետալով», նշուած է ՀՀ նախագահի հրամանագրին մէջ:

Մետալի յանձնման արարողութեան ընթացքին հնչեցրած իր խօսքին մէջ դեսպան Բայբուրդեանը ընդգծեց, որ Փոլ Գրիգորեանը բարձրագոյն պարգևներ կ'արժանանայ հայրենիքի նկատմամբ ցուցաբերած անմնացորդ նուիրումի համար եւ չափազանց բարձր գնահատեց իր գործունէութիւնը ԱՄՆ երկրորդ ամենամեծ քաղաքը հանդիսացող Լոս Անձելոսի, ինչպէս նաեւ ամբողջ Գալիֆորնիայի շրջանակներուն: ՀՀ գլխավոր հիւպատոսը շնորհակալութիւններ արժեքաւոր ներդրումը Հայաստան-Գալիֆորնիա յարաբերութիւններու զարգացման, հայ համայնքի առջեւ ծառայած խնդիրներու լուծման, ինչպէս նաեւ Հայաստանին եւ Արցախին աջակցութեան գործին մէջ: Մասնաւորապէս, Բայբուրդեանը կարեւորեց Լոս Անձելոսի քաղաքային խորհրդի կողմէ թուրքիայի աջակցութեամբ Ատրպէյճանի սանձազերծած պատերազմի դատապարտման ու հայ ժողովրդի նկատմամբ բռնութեան դադարեցման հնչեցուցած պահանջը:

«Արցախեան պատերազմի առաջին օրերուն Փոլ Գրիգորեանը ձեռնամուխ եղաւ ամերիկացի քաղաքական եւ պետական գործիչներու համախմբմանը՝ յանուն Արցախի դէմ Ատրպէյճանի կողմէ սանձազերծած պատերազմի դադարեցման: Անոր ջանքերու շնորհիւ համատեղ մամուլի ասուլիսով հանդէս եկան ԱՄՆ կոնգրեսականներ,

Գալիֆորնիայի նահանգային խորհրդարանի առաջնորդներ եւ անդամներ, Լոս Անձելոսի քաղաքային ղեկավարներ եւ պաշտօնէներ՝ պահանջելով անմիջապէս դադարեցնել հայ ժողովրդի նկատմամբ բռնութիւնը: Պատերազմի աւարտէն յետոյ Փոլ Գրիգորեանի շնորհիւ Լոս Անձելոսի քաղաքային խորհուրդը միաձայն բանաձեւ ընդունեց, որով վերահաստատեց Լոս Անձելոս քաղաքի աջակցութիւնը Արցախի Հանրապետութեան ժողովրդին: Փոլ Գրիգորեանի նախաձեռնութեամբ Լոս Անձելոսի քաղաքային խորհուրդը միաձայն մէկ այլ հռչակագիր ընդունեց, որով Ատրպէյճանէն պահանջեց անյապաղ ազատ արձակել հայ ռազմագերիներուն եւ գերեզարուած խաղաղ բնակչութեանը, ինչպէս նաեւ Նոյեմբերի 9-ը հռչակուեցաւ ատրպէյճանական յարձակման գոհերու յիշատակի օր:

գիկ Յարութիւնեանը եւ վարչապետ Հրանտ Բազրատեանը այցելեցին Վեհափառին՝ նրան յանձնելու «Հայաստանի ազգային հերոսի» կոչման հրամանագիրը:

Օգոստոսի 18-ին Տէր-Պետրոսեանը հրամանագիր ստորագրեց, որով Օգոստոսի 26-ից մինչեւ յուղարկաւորութեան օրը՝ Օգոստոսի 28-ը, յայտարարուեց համազգային սուգ:

Հայաստանի նախագահի, Գերագոյն խորհրդի եւ կառավարութեան Օգոստոսի 18-ի համատեղ հաղորդագրութեան մէջ ասուում էր. «Հայ ժողովուրդը եւ Հայաստանեայց առաքելական եկեղեցին կորցրին իրենց մեծ երախտաւորին, որի շուրջ քառասունամեայ իր գործունէութիւնը ամբողջովին նուիրեց ազգային միասնութեան ամրապնդման, հոգեւոր վերածնութեան եւ հայկական պետականութեան վերականգնման վեհ գոր-

թարացաւ: Թէեւ զգացում էր գիտակցութեան առկայութիւն, սակայն Վեհափառ Հայրապետը աստիճանաբար կորցրեց խօսելու եւ արտայայտուելու կարողութիւնը: Երբ կացութիւնն այլեւս անյոյս էր, Վեհափառ Հայրապետը ընդունեց վերջին հաղորդութիւնը: Ամբողջ գիշեր Մայր Աթոռի միաբան եպիսկոպոսները հսկում էին Վեհափառ Հայրապետի մահճի մօտ՝ արօթքների, սաղմոսների եւ Նարեկի ընթերցանութեամբ: Ազգիս Վեհափառ Հայրապետը Օգոստոսի 18-ին առաւօտեան ժամը 7.15-ին, 86-ամեայ հասակում ի Տէր աւանդեց իր հոգին: Թող Տէրն իր յաւիտենական օթեւանի մէջ ընդունի երջանկայիշատակ Վեհափառի հոգին»:

Լեւոն Տէր-Պետրոսեանի խօսքը Վեհափառի յուղարկաւորութեան ժամանակ. «Այսօր սգացող հայ ժողովուրդը հայրենեաց սուրբ

Դասական Յունարեւմտի եւ Դասական Գրաբարի Առանձնայատկութիւններէն «Այլ փրկեա՛ Ձմեզ ի շարէ»

ԶԱԻԷՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Որոշիչ Յօդերու Գործածութիւնը

Նպատակս քարոզ մը խօսիլ չէ, այլ պարզ փնտրութիւն մը կատարելն է աղօթանուէր հաւատացեալի մը ուղղած մէկ հարցումին որպէս պատասխան: Լսած էր որ ոմանք «փրկեա՛ զմեզ ի շարէն» կ'արտասանեն փոխանակ «ի շարէ» ուղիղ ձեւին ինչպէս ինքս նաեւ լսեր եմ:

Երբ «Հայր Մեր» Տէրունական Աղօթքը կ'արտասանենք վերջաւորութեան «այլ փրկեա՛ զմեզ ի շարէ» թէ ոչ «ի շարէն» պէտք է ըսել, կը հարցնէր հաւատացեալը: Երկրորդ պարագային յատուկ եւ մասնաւոր «չարիք»ի մը կ'ակնարկուի երբ որոշիչ Ն գիրը կ'աւելցնենք ինչպէս «Փրկիչն մեր»: Մինչդեռ առանց «ն» որոշիչ յօդին «չարիք»ը կը հասկցուի իր աւելի լայն եւ ընդհանուր հասկացողութեամբ, այսինքն զմեզ «ամէն տեսակ չարիքէ ազատ» կ'աղերսուի քան թէ մէկ որոշ չարիքէ մը, ինչպէս չիրաւի աղօթքին նպատակն է:

Աշխարհաբարի թարգմանութեամբ հասկնալի կը դառնայ Ն եւ կամ Ը որոշիչ յօդերուն առատ օգտագործումը, բայց դասական գրաբար լեզուին մէջ նուազ կը հանդիպինք Ն գիրին իր նոյն պաշտօնով, ինչպէս «Տէրն մեր», «Արեգակն արդար», «բիտումն ի Հօրէ»: Իսկ Ը որոշիչ յօդը երբեք կապ չունի գրաբար լեզուին հետ, քանի ան միայն աշխարհաբարին կը վերաբերի: Նկատի ունենալ նաեւ, «ի Հօրէ» բացառական հոլովը, որուն ետին Ն որոշիչ յօդը դարձեալ քիչ անգամ կը տեսնենք գրաբար լեզուին մէջ, ինչպէս «ի Փրկչն մերմէ»: Գրաբար լեզուն բառին բացառական հոլովին ետին Ն գիրը ընդհանապէս չի կցեր: Հետեւաբար «ի շարէն» ձեւակերպումը խորթ է մեր գրաբարին:

«Այլ Փրկեա՛ Ձմեզ ի Չարէ»

Երբ մեր Ոսկեդարեան Թարգմանիչները Աստուածաշունչ Մատեանը գրաբարի թարգմանեցին, Տէրունական Աղօթքին մէջ «ի շարէ» թարգմանեցին, հակառակ անոր որ Յունարէն Եօթանասնից Սուրբ Գիրքը որմէ թարգմանեցին, «ի շարէն» գրած է: Մեր Թարգմանիչները քաջ գիտնալով հանդերձ յունարէն լեզուն պահեցին գրաբարի կառուցուածքը եւ այս կէտին մէջ չհետեւեցան յունարէն բնագրին: Անգլերէն թարգմանութեան մէջ ալ "Deliver us from evil" կը կարդանք եւ ոչ "from the evil": Յունարէնն ու Գրաբարը դասական լեզուներ ըլլալով բնականաբար ունին իրենց առանձնայատկութիւնները:

Որպէս հայերէն խօսակցական լեզու Թարգմանիչներն ու իրենց նախնիքը միայն գրաբարը գիտէին կամ ունէին, սորված ըլլալով հանդերձ յունարէնն ու ասորերէնը, որքան ատեն որ գիրերը տակաւին չէին հնարուած ու հաստատուած արտայայտելու համար լեզուին բառամթերքն ու քերականական կառուցուածքը, որուն վրայ գիրերու գիւտէն ետք պիտի հիմնէին առաջին թարգմանութիւնները: Անոնք պիտի չթարգմանէին յունարէն լեզուն իր առանձնայատկութիւնը, այլ պիտի թարգմանէին բովանդակութիւնը՝ հաստատուն գրաբար լե-

զուով որուն տիրապետած էին լիովին: Արդէն ուրիշ տարբերակ չկար այն ատեն գրաբարի կողքին:

Երբ կը կարդանք յունարէն «Հայր Մեր»ը առաջին տողերուն մէջն իսկ կը տեսնենք նոյն դրոշմը: Հոն «սուրբ եղիցի անունն քո» գրուած է, ինչպէս նաեւ «եկեցեց արքայութիւնն քո» «եղիցի կամ քն քո», մինչդեռ մեր թարգմանիչները գրաբարի հաստատ օրէնքներով կամ առանձնայատկութիւններով թարգմանած են «սուրբ եղիցի անուն քո», «եկեցեց արքայութիւն քո», «եղիցին կամ ք քո»: Չգիտեմ «եղիցին» բառին վերջին «ն» գիրը որ որոշիչ յօդ չէ, պարզապէս եղիցի բային յոգնակի երրորդ դէմքին խոնարհումն է, յոգնակի «կամ ք» բառին ենթակայ: Շատեր «եղիցի կամ ք քո» ըսելով կ'անցնին, փոխանակ բայը երրորդ դէմք յոգնակի կարդալով:

Նշելի է նաեւ յունարէն բնագրին կրկնապէս «որոշիչ» դարձնելու արտայայտութիւնը: Երբ արդէն «սուրբ եղիցի անուն քո» կ'ըսուի, հոն որոշապէս «քո» դերանունը ամբողջովին կը ճշդէ թէ որու անունն մասին է խօսքը: Նոյնպէս «արքայութիւն քո» եւ «կամ ք քո»: Որոշիչ յօդը աւելորդ կը մնայ երբ արդէն բնորոշուած է թէ որո՛ւն յատուկ են անոնք՝ ուղղակի «քո» դերանունով: Բնականաբար Յունարէն լեզուի առանձնայատկութիւններէն մին է այդ կրկնակի շեշտադրումը: Գրաբար լեզուն ուրեմն կը գատորոշուի իր ճկունութեամբն ու կարգմամբը:

Այս բոլորը կը հաստատեն սխալ գործածութիւնը երբ ոմանք «ի շարէն» կը նախընտրեն իբրեւ թէ շեշտելու համար «չարը»: Մինչդեռ ինչպէս ըսուեցաւ աղօթքը մէկ յատուկ շարիքի մասին չէ, շարիքը որպէս ամբողջութիւն, ամէն տեսակի չարիքէ փրկութիւն կը հայցուի: Ուրեմն հարցին պատասխանն այն է որ Ոսկեդարեան հնագոյն թարգմանութեան հետեւելով պիտի աղօթենք «այլ փրկեա՛ զմեզ ի շարէ» հայցելով: Առաւել եւս որեւէ մէկը պիտի չհամարձակի Աստուածաշունչ Մատեանէն գիր մը եւ ստորակէտ մը փոխելու եւ նաեւ Ոսկեդարեան թարգմանութիւնը «ճշդելու»: Քաւ լիցի: Բնագիրն ու իմաստը այս է:

Սողոմոն, Սիոն

«Վ» գիրը յատկապէս ընդգծեցի որովհետեւ «գրաբարագէտ» տիրացուներ եւ անհատ հոգեւոր հայրեր երբ կը կարդան Աւետարանէն երբեմն կը շեշտեն Սողոմոնի եւ Սիոնի անպաշտօն «վ» գիրը, զանոնք բարձրաձայն արտասանելով ցոյց տալու համար գրաբար գիտցած կամ չգիտցած ըլլալնին: Հոս դարձեալ յունարէն լեզուէն տառադարձութեան օրէնք մը կայ որուն մասին հետեւեալ բացատրութիւնը կ'ուզեմ տալ:

Սողոմոն անունը երեք հատ «ո» գիրեր ունի եւ տառադարձուած է յունարէն լեզուէն ուր առաջին երկուքը «օմիգրոն» են ու վերջինը «օմեկա»: Մեր թարգմանիչները նկատի ունէին որ հայերէն նորահնար գիրերուն մէջ միայն «Ո» գիրը կը ձայնէր որպէս համազօր, եւ գիտականօրէն կարելի չէր յունարէն երկու տարբեր գիրերուն դիմաց միեւնոյն գիրը հաւա-



սարեցնել: Ուստի հնարք մը ըրին ու «օմեկա» տառին համար հնարեցին «ով» բաղադրեալը, գատորոշելու համար «օմիգրոն»էն: Ոմանք շուտով պիտի ըսեն թէ մենք ունինք արդէն «օ» գիրը որ կրնար փոխարինել: Սակայն պէտք է գիտնալ որ Մեսրոպեան այբուբենին մէջ նման գիր մը գոյութիւն չունի, այլ միայն «աւ» բաղադրեալը, ինչպէս Պաւղոս (Պողոս) եւ կամ աւրէնք (օրէնք): Հետագային է որ «օ» եւ «ֆ» գիրերը աւելցած են

մեսրոպեան այբուբենի վերջաւորութեան: «Սիոն»ի պարագային նոյնպէս, եթէ մինչեւ դար մը առաջ «վ» գիրով կը գրէին, արդէն անպաշտօն եւ անձայն այդ գիրը անտեսուեցաւ ու հնչումը մնաց անաղարտ, Հետեւաբար կարդալ Սողոմոն եւ Սիոն ու նմանատիպ բառեր հաստատ գիտնալով որ յունարէն «օմեկա» գիրին հաւասար մեր թարգմանիչները հնարած են «վ» գիրը կցելով ձայնաւոր գիրին:

«Վա՛գ անցիդ Եղբայր» «Հագիւ Հագ»

«Վա՛գ անցիդ»

Երկու հայերէն հասարակ արտայայտութիւններ որոնք երբեմն թրքաբանութիւն կը նկատուին, մանաւանդ առաջինը: Մինչդեռ «վագ անցիդ» երկու հայերէն «վագել» եւ «անցիլ» բայերու արմատներն են իրարու միացած բացայայտելու համար այսինչ գործին չձեռնարկել, հրաժարիլ, ինչպէս բոլորս գիտենք, նկատի ունենալով գործին հաւանական չփոթելու եւ կամ առնուելիք քայլերուն անվստահելի ու վտանգաւոր ըլլալը: Այդ տեսակ կասկածելի գործառնութենէ «վագէ ու անցիդ», մի՛ միջամտեր եւ կամ այդ գործին մի՛ խառնուիր: Ուրեմն «վագք» բառը հայերէն բառ է եւ արմատն է «վագել» բային ուր թրքաբանութիւն չկայ:

«Հագիւ Հագ»

Հակառակ անվերջ գործածութեան, հոս եւս շատերուն յայտնի չէ մեր գիտցած «հագիւ» բառին ինքնութիւնը որ կը շեշտէ, օրինակի համար, «վերջին րոպէին հասալ դուռը բանալու»: Բառին արմատն է «հագ» եւ բայն ալ «հագալ» որ այնքան հարագատ է բոլորիս: Բոլորս կը հագանք, կոկորդի եւ կամ կուրծքի նեղութեան հետեւանքով որ րոպէ մը կը տեւէ, կը կրկնուի, եւ հագերու միջեւ ու անոնց շաքին ամենակարճ տեւողութիւնն է որ կը գոչանայ: Ուրեմն յայտնի կը դառնայ որ «հագիւ» բառը գործիական հոլովն է «հագ» բառին, այսինքն «հագով» եւ կամ «հագալով»: Իսկ ինչ նպատակ ունի բառին գործածութիւնը, որ «հագ» մըն ալ կ'աւելցնէ շեշտելու համար ասագանգը, նպատակը պէտք է տեսնել երկու հագերուն ամենակարճ տեւողութեան մէջ:

Երկուքն ալ Հայերէն Բառեր են

Եզրակացութիւնն այն է ուրմեն որ այս երկու շատ հասարակ եւ աւօրեայ գործածութեան մաս կազմող արտայայտութիւնները հայերէն արմատներէ կազմուած են, նոյնիսկ գնահատելի որպէս «անկարեւոր» եւ սակայն շատ գործածելի, հայերէն խօսակցական լեզուին մաս կը կազմեն: Հայերէն գրական լեզուին մաս կը կալմե՞ն անոնք, մեր պատասխանն է ոչ, միայն խօսակցական լեզուի հասարակ խօսակցութեան կը վերաբերին երկուքն ալ՝ թէ «վագ անցիլ»ը եւ թէ «հագիւ հագ»ը:

ՏԶԱ

Անմոռանալի Գեղեցիկ Երեկոյ Նուիրուած՝ Մեծն Միեր Սկրտչեանի 90-ամեակին

ԽԱՉԻԿ ՃԱՆՈՅԵԱՆ

Յուլիս 15, 2021-ին «Ար-պատ» գեղատեսիլ ռեստորանի գլխավոր սրահին մէջ տեղի ունեցաւ Մհեր Մկրտչեանի 90-ամեակին նուիրուած երեկոյ: Ես վաղուց չեմ չիշեր նման մեծարանքի երեկոյ, որ տեղի ունեցած ըլլայ մեր համայնքին մէջ:

Ես շնորհակալութիւն կը յայտնեմ Ռուբէն Ղուբեան և էլմիրա Գասպարեաններուն, բարձր մակարդակով նման երեկոյ կազմակերպելուն համար: Նախ հպարտեմ, որ ներկայ էին Լոս Անձեղըսի մեր համայնքին մէջ ապրող նման հմուտ մտաւորական մարդիկ՝ լրագրողներ, համայնքի տարբեր միութիւններ ներկայացնող անձիք, իրաւաբաններ, բժիշկներ, գրողներ, գործարարներ, հանրայայտ նկարիչներու մեծ խումբ մը. մարդիկ, որոնք կը գնահատեն մեր ազգային արժէքները և արժէք ունեցող մարդիկը:

Երեկոյին կը մասնակցէին նաև Մհեր Մկրտչեանի մեծ քրոջ՝ Կլարայի որդիին՝ Յակոբ Սիմոնեանը: Իր տիկնոջ՝ Նարինէի հետ միասին, որոնք ժամանած էին Արժանթինէն, յատուկ այս միջոցառումին մասնակցեցաւ համար:

Միայն զարմար իրենց մասնակցութիւնն էին բերած նաև համայնքի ճանաչուած արուեստագէտները: Իսկ ազգին հպարտութիւնը իր տաղանդաւոր գաւազներուն մէջ է.

1. Հայաստան պարարուեստի կեդրոնի սաները, գեղարուեստական ղեկավարներ՝ Արման և Նաիրա Վարդանեաններ
2. Ռուբէն Յարութիւնեան
3. Ռազմիկ Մանուկեան
4. Գէորգ Չաքմանեան
5. Մարգարիտա Խլղաթեան
6. Յովհաննէս Շահբազեան
7. Յովհաննէս Բաբախանեան

8. Գէորգ Յարութիւնեան
9. Գրիշա Դաւթեան, բոլորն ալ հրաշալի երգեցին:

Ֆրոնզի մասին, իրենց խօսքով և յուշերով հանդես եկան՝

1. Ակադեմիկոս, բժիշկ-հոգեբան՝ Գագիկ Կարապետեանը
2. Գրող-արձակագիր՝ Մարգարիտ Դերանցը
3. Ազգային տարագրի վարպետուհի՝ Քնարիկ Ներսիսեանը
4. Դերասան՝ Յովհաննէս Բաբախանեանը
5. Ղուբեանը

Կար ասմունք և գեղեցիկ յուշեր Ֆրոնզի մասին: Սրահը զարդարուած էր քանդակագործ՝ Գասպար Ղարիբեանի պատրաստած Ֆրոնզի կիսանդրով:

«Աթինաս-քէյք-ստուտիոյի» կողմէ, Ֆրոնզի նկարներով և անուան տառերով պատրաստուած մեծ

տորթը, որպէս նուէր Ֆրոնզի միջոցառուման, համեսեց լեփ-լեցուն սրահի իւրաքանչիւր մասնակից: Տիկ. էլմիրան շատ գեղեցիկ վարեց երեկոն և մենք գերագոյն հաճոյք ստացանք:

Իսկ Ղուբեանը շատ հետաքրքիր պատմութիւններ պատմեց Ֆրոնզի յուշերէն, կապուած իր հետ և ծիծաղի բազում պահեր պարգևեց բոլորիս:

Յետմահու մեծարանքի արժանացաւ երեկոյի գլխավոր հովանաւոր՝ Սուրեն Սողոմոնյանը:

Պատուոյ գիրքերու արժանացան չորս Սարգիսները՝

1. Սարգիս Թոփալեանը
2. Սարգիս Նիկողոսեանը
3. Սարգիս Թադևոսեանը
4. Սարգիս Բաստեղեանը:

Ողջ երեկոյի ընթացքին, սրահը աշխոյժ պահեց ժող-գործիքներու նուագախումբը՝ իր գեղեցիկ կատարումներով:

Իսկ նախարահը կը զարդարէին Հայ-ամերիկեան արուեստի միութեան նկարիչներու հրաշալի աշխատանքները: Նախ վայելեցինք այդ գործերը, ապա սկսաւ երեկոն: Նման ձեռնարկ մը վայել էր, որ կազմակերպուէր քաղաքիս մշակութային բոլոր միութեանց ճիգերով, յարգել մեր յաւերժալոյս դերասանին անմեռ յիշատակը, և ոչ թէ մէկ միութեան մը կողմէ ըլլար ատիկա:

Ես դարձեալ շնորհակալութիւն կը յայտնեմ կազմակերպիչներուն, մեզի գերագոյն հաճոյք պարգևելուն համար: Մհեր Մկրտչեանին նուիրուած այս մեծարանքի երեկոն, յետ մահու մեր հերթական երախտիքն է հայազգի արժանաւոր մարդոց:

Այս գեղեցիկ և ինքնատիպ երեկոն փաստեց, որ հայ ազգը յարատե է, իսկ իր տաղանդաւոր գաւազները արժանի են նման մեծարանքի:

Մենք սիրով և հաճոյքով կը սպասենք Ղուբեանի կողմէ յաճախակի կազմակերպուող նման գեղեցիկ և անակնկալ միջոցառումներու: Ի դէպ նշեմ, որ Նոյեմբերի 26-27-ին, դարձեալ Ղուբեանի նախաձեռնութեամբ, Palm Springs քաղաքի մէջ տեղի կ'ունենայ հայ նկարիչներու բացառիկ աշխատանքներու մեծ ցուցահանդէսը: Հայկական ֆեստիվալ – հայկական միջոցառում: Կը մասնակցին հայազգի ճանաչուած արուեստագէտներ, պիտի ըլլան հայկական երգ-երաժշտութիւն, հայկական ուտելիք – խորոված, խմորեղէն, պաղպաղակ, զովացուցիչ և այլն:

Նոյն միջոցառումը տեղի կ'ունենայ նաև Ֆրեզնօ քաղաքի մէջ, 2022 թուականի Փետրուար 19-20-ին, բացօթեայ տարածքներում:

Յաջողութիւն Ղուբեանի բոլոր նախաձեռնութիւններուն:


Պայծառ Յիշատակդ Մեր Սրտերում Անմոռանալի Սիրելի Ալմին (Մահուան Տխուր Առիթով)

Ռ. ԿՈՐԻԻՆ

Մահուան գոյժը ցաւով եւ թախիծով մեզ համակեց, երբ լսեցինք արժանաւոր հայորդի Ալմինի անսպասելի մահուան բօթը շաբաթ, 14 օգոստոսի 2021-ին Թեհրանում: Մահաթոյր եւ անողոք պսակաժահր ախտ-վարակը նրան վաղաժամ կեանքից զրկեց եւ բոլորին՝ ընտանեկան կազմին, հարազատներին, գործակիցներին, գրչակիցներին, ընկերներին, աշակերտներին եւ ճանաչողաց սուգի մատնեց:

Սիրելի անձի, ուսման մշակի, մտաւորական մարդու, գիր ու գրականութեան-բանաստեղծի, արուեստագէտի եւ հասարակական գործչի կորուստը ծանր է նստում, փստսանքով ու տխրութեամբ է ընկալուում, ցաւով ու վիշտով է տոգորում, քանզի նրանց նմաններին փոխարինողները մեր այս սփիւռքեան անմխիթար պայմաններում սակաւ են:

Համաճարակով կորուստները վշտալի հոգեվիճակ են թողնում շրջապատի վրայ, տրտմալից-թախիծով լուռ ու մունջ սակաւ յուղարկաւորների ներկայութեամբ հողին են յանձնուում: Սուգ անմիջական հարազատներին եւ ճանաչողաց սրտերում, էս ինչ սաղայլ-լական բռնկում էր, որ աշխարհն առաւ իր ճիրաններում լաց ու կոծով մոռնուցնելու եւ կսկծացնելու ընտանիքներին: Քիչ չեղաւ մեր հայ իրականութեան մէջ կորուստները թէ՛ հայրենիքում եւ թէ՛ Սփիւռքեան տարբեր օջախներում: Տէր Կոմիտաս Աւագ քահանայ Ղարաբանեանին մահուան յաջորդող նոյն համաճարակով կեանքից հեռացաւ մեր մշակոյթին նուիրուած վաստակաւոր ուսուցիչ եւ ճանաչուած բանաստեղծ Ալբերտ Մինասեանը (գրական անունով՝ Ալմին) 1952 ծնունդ Թեհրանից: Ինչպէս Տէր Կոմիտասի մահը, նոյնպէս Ալմինի մահը այդ վարակով ալեկոծեց մեր ճանաչողաց սրտերն ու հոգիները երկու արժանաւոր կորուստների՝ մէկը որպէս հոգեւորական, իսկ այս մէկը որպէս կրթական գործիչ, մտաւորական եւ գրող, երկուսն էլ «Մասուն»-Նարմաք քաղաքամասի բնակիչներ: Նուաստս եւ Ալմինը նոյն քաղաքամասի, կարելի է ասել նրա կազմակերպումից շուրջ յիսուս տարիներ նոյն քաղաքամասում ապրել եւ ծառայել ենք նոյն շրջանում, հետեւաբար իմ ծանօթութիւնս երկար տարիների անցեալ ունի անմոռանի յուշերով: Մեր ծանօթութիւնը մտերմութեան եւ գործակիցի հանգամանք ստացաւ երբ 1979 թուականին պաշտօնավարում էինք՝ «Յ. Թովմասեան» միջնակարգ երկսեռ դպրոցում: Իրանի Իսլամական առաջին տարին էր, չկալուանցած քաղաքական վիճակ, ամէն կողմ մտահոգութիւններ էր տիրում, յետագայ իրադարձութիւնների կապակցութեամբ խորհրդակցան նպատակով նախապէս Ալմինի միջոցաւ ձեռք բերուած ժամադրութեան դպրոցի պարսիկ ուսուցիչներին մէկի հետ հանդիպեցինք այն օրերի «Ալիք» օրաթերթի խմբագիր Հրայր Խալաթեանի հետ, որը դարձաւ հայութեան ներկայացուցիչը իսլամական խորհրդարանում: Նրա փոխանցած տեղեկու-



թիւններից բաւական լուսաւորուած հրաժեշտ տուինք: Պարսիկ ուսուցիչը շատ գոհ էր մնացել ասելով՝ «դուք ինչ արժանապատիւ գրող մտաւորականներ ունէք համայնքում, սա հարստութիւն է հայութեան համար»:

Յեղափոխութեան յաջորդ տարին երկսեռ դպրոցները արգելուեցին, ուստի ես ու Ալմինը տեղափոխուեցինք նոյն քաղաքամասի «Նալիր» ուղեցոյց ազգային տղայաց դպրոցում: Ալմինը լուրջ ծանրաբարոյ անձնաւորութիւն էր, մարդկային բարեմասնութիւններով օժտուած յարգարժան մէկը, Նրա ելոյթներից ծաղկաբոյր պէս ցոլում էր հայրենասիրութիւն, ազգասիրութիւն եւ մշակութասիրութիւն: Այսպէս մենք մնացինք կրթադաստիարակչութեան ծառայող-գործակիցներ մինչեւ հանգստի կոչուելը, Ալմինը շարունակեց իր կեանքը Թեհրանում, իսկ ես 2005 թ. արտագաղթեցի Ամերիկա:

Իմ Թեհրան ճամբորդութիւններս մտադրուած կատարել եմ Հոկտեմբեր ամսում մասնակցելու մշակոյթի տօնակատարութեան եւ Սրբոց Թարգմանչաց պատարագին ներկայ լինելու ու հանդիպելու գործակից ուսուցիչներու հետ: 2018-ի Հոկտեմբեր ամիսն էր, ես Թեհրանում էի, հեռաւոր ԱՄՆ-ից Հայաստանի ճամբով եկած՝ կարօտի զգացումով, ներկայ գտնուեցի Հոկտեմբերի 13-ի եպիսկոպոսական Սրբ. Պատարագին Սրբոց Թարգմանչաց եկեղեցում, պատարագիչն էր թեմիս բարեխնամ առաջնորդ՝ Տ. Սեպուհ Արք. Սարգստեանը, հնչում էր հոգեզմայլ երգեցողութիւնը խորհրդաւոր միջոցառում, եկեղեցին լեցուն էր տարբեր շրջաններից եկած ուսուցիչներով եւ հաւատացեալներով: Քարոզի ընթացքում Առաջնորդը վեր հանեց Սրբոց Թարգմանչաների մեծ դերը եւ տառերի գիւտի իմաստն ու խորհուրդը: Սրբազան հայրը իր քարոզի մէկ հատուածում ասաց՝ «Հայերէն տառերը եղան այն 36 սանդուղքները, որոնցով մեր ժողովուրդն առաջնորդուեց դէպի յաւիտենականութիւն...»:

Հիւրասիրութիւն էր կազմակերպուած եկեղեցու սրահում Սրբազան հօր հովանաւորութեամբ, ներկայ էին նաեւ ուսուցիչներ: Սրահում ես ու Ալմինը կողք-կողքի էինք նստած, Տէր Կոմիտասի խօսքից յետոյ ձայն տրուեց Ալմինին, նա փառաւորեց օրուայ խորհուրդը իր կուռ հայերէնով ու գեղեցիկ

ԿԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

Իշխանափոխութիւն Աֆղանիստանի Մէջ ճանչնանք Թալիպանը

Մօտ երկու շաբաթէ ի վեր միջազգային լրատուամիջոցներու կիզակէտերէն մին հանդիսացած է Աֆղանիստանի մէջ տեղի ունեցած անակնկալ իշխանափոխութիւնը Թալիպան շարժումին կողմէ, ստեղծելով երկրէն ներս համատարած քառասյին իրավիճակ:

Ովքե՞ր են Թալիպանները «Թալիպան» կը նշանակէ ուսանող կամ ուսանողներ, որոնք ծայրայեղ մահմետականներ են եւ կառուցած իսլամական կրօնքին եւ անոր կողմէ հաստատուած «Շարիա» կրօնա-աշխարհական օրինագիծին, որուն դատաիրաւական կարգ մը տրամադրութիւնները ցարդ կը գործադրուին որոշ երկիրներու մէջ: Այս կրօնա-քաղաքական շարժումն Աֆղանիստանի մէջ, դարձած է գինուորական կազմակերպութիւն մը:

Արեւմուտքի համար ահաբեկչական կազմակերպութիւն յորջորջուող Թալիպան շարժումն ստեղծուած է 1994ին Աֆղանիստանի Գանտահար քաղաքին մէջ: Հիմնադիրներն են Մուհամմատ Օմար եւ Ապտուլ Ղանի Պարատար: Անոնք կը հաւակնին իրենց այս կառուցը անուանելու «Աֆղանիստանի իսլամական էմիրութիւն»:

Արդարեւ, Աֆղանիստանի մէջ ուռճացած այս իսլամական կրօնա-քաղաքական շարժումն որ էութեամբ ռազմական կազմակերպութիւն մը ըլլալով ահաբեկչական հաստատութիւն կը համարուի շատերու կողմէ:

Աֆղանիստանի ընդերքի բնական կարեւորագոյն հարստութիւնը լիթիումն է որ ընդհանրապէս կը գործածուի մարտկոցներու (battery) պատրաստութեան, ինչպէս նաեւ բժշկական եւ հիւլէական ու այլ արտադրութեանց մէջ: Աֆղանիստանի լիտիումի այժմու պաշարը կը գնահատուի 3,3 միլիարդ տոնայ: Ասով հանդերձ երկիրը հարուստ է նաեւ թմրանիւթերու ընդարձակ ցանկատարածութիւններով ու մեծագումար հաստիթ ապահովող վաճառականութեամբ:

Ընկերային արդարութեան, մարդու իրաւունքներու պաշտպանութեան եւ քաղաքական ու այլ հաշիւներէ տարուած յաջորդաբար այս երկրի վրայ իրենց տիրակալութիւնը պարտադրեցին չինացիները, ռուսները (սովետ միութեան օրով) եւ ամերիկացիները: Այս կապակցութեամբ ԱՄՆ-ը անցնող քսան տարիներու ընթացքին 750,000 գինուոր փոխադրեց Աֆղանիստան եւ չի կրցաւ լաւապէս

մարզել 300 հազարի հասնող երկրի ազգային բանակը: Նախատեսուած բարեկարգութիւնները չիրականացան: Ընդհանրապէս համատարած դժգոհութիւն կար ամէնուրեք:

Այս կացութեան ներքեւ առաւել եւս զօրացաւ Թալիպաններու ապստամբական շարժումը մօտ 40 միլիոն հաշուող Աֆղանիստանի բովանդակ տարածաշրջանին մէջ: 1990-ական թուականի կէսերուն սովետ զինուորներու հեռացումէն ետք, Թալիպանները, ընդդիմադիր ոյժերու հետ իշխանութեան գլուխն անցան 1996ին: Համաշխարհային հանրային կարծիքը՝ դէմ էր Թալիպաններու կողմնակալ եւ կանանց հանդէպ խտրական գործունէութեան եւ միջազգային ահաբեկչներուն առջեւ երկրին դռները բանալուն: Անոնք դէմ էին նաեւ Ալ-Քալիտայի սէրտոցի ղեկավար Օսամա Պէն Լատընը ԱՄՆ-ին յանձնելուն, Նիւ Եորքի գոյգ երկնաքեռ աշտարակներու փլուզումէն ետք:

ԱՄՆ-ը այս շրջանին բազմաթիւ տարբեր հոսանքներու միջեւ բանակցութիւններէ ետք, իրենց տիրապետութիւնը հաստատեցին երկրէն ներս, որ տեւեց շուրջ քսան տարի: Իսկ Թալիպաններն առաւել եւս միասնացան եւ համատարած ապստամբական շարժումներով նախ գրաւեցին գլխաւոր նահանգներու քաղաքները արագօրէն հասնելով մայրաքաղաք Գապուլ:

Իշխանափոխութիւնը կատարուած էր: Նախագահը փախուստ տուած էր իր համակիրներով: ԱՄՆ զինուորները վերդարձած էին տուն, միայն 6000 զինեալ պահելով օդակայանին շուրջ ԱՄՆ-ի մէջ հաստատուած հպատակներու եւ համակիրներու ապահով մեկնումին համար:

Պատկերը ներկայիս շատ դժիւ է: Ձինեալ ահաբեկիչներու ձեռքն է երկիրը: «Շարիաթ»ի օրէնքը ի գօրու դառնալու վրայ է: Երկրի դրամը յանկարծակի արժէքազրկում ունեցաւ: Մարդու իրաւունքներու կատարեալ խախտում: Կինները գրկուած են այր բժիշկներու մօտ երթալէ եւ տունները մնալը պայման է: Նպարավաճառներու խանութները գրեթէ դատարկուած են: Հազարաւորներ օդակայան կը փութան երկրէն հեռանալու համար...: Քառասյին վիճակ ամէնուրեք: Թուրքիա եւ Իրան չեն փափաքիր աֆղան գաղթականներ ընդունիլ: Եւրոպական երկիրները եւս մտահոգ են այս հարցով:

Լաւագոյն լուծումը՝ ժողովրդավարութեան հաստատումն է շիւնիչ բանակցութեանց միջոցով:

«ԵՐԵՒԱՆ ԼՈՒՐ»

Մահացած է Պոլսահայ Լրագրող Ռաֆֆի Յերմոն Արաքսը

Երեւանի մէջ իր մահկանացուն կնքած է Պոլսահայ հանրայն լրագրող Ռաֆֆի Յերմոն Արաքսը:

Արաքս անհանգստութեան մը հետեւանքով փոխադրուած էր հիւանդանոց ու ենթարկուած վիրաբուժական գործողութեան: Գործողութենէն անմիջապէս ետք Արաքսի մօտ յայտնաբերուած են շնչառական դժուարութիւններ, եւ այս բոլորէն ետք անոր կեանքով լեցուն սիրտը դադրած է աշխատել ...

Ռաֆֆի Յերմոն Արաքսի անունը ուղակիօրէն կը կապուի Պոլսոյ հայկական շրջանակներու վերջին ժամանակներու ապրած զարթօնքին հետ:

Լրագրական իր առաջին քայլերը «Մարմարա» օրաթերթին մէջ նետելէ ետք, շուտով կը միանայ Հրանդ Տինքի հիմնադրած «Ակոս» պարբերականին դառնալով այդ թերթի առաջին աշխատակիցներէն մին: Քիչ անց ընթացք կ'«առնէ Ռաֆֆի Յերմոն Արաքսի լրագրողական «ճանապարհորդութիւն»ը, եւ ան տեղի հայկական պարբերականներէն բացի, հանդէս կը սկսի գալ թրքական յայտնի պարբերականներուն մէջ:

Շրջան մը ետք Արաքս կը հաստատուի Փարիզ եւ «լոյսերու քաղաք»էն թղթակցութիւններ կ'«ուղարկէ, թէ թրքական, թէ ալ Երեւան հրապարակուող «Ազգ» օրաթերթին դառնալով նշեալ թերթի կարեւոր անուններէն մին:

Պոլսոյ հայութեան անցեալ, ներկայի մարտահրաւէրներ, Պոլսոյ Պատրիարքական Աթոռի խնդիրներ, իսլամացած հայեր եւ նմանօրինակ թեմաներ կը դառնան



Արաքսի համար ամէնօրեայ հետաքրքրութեան ծիր եւ առանցք:

Վերջին տարիներուն հաստատուելէ ետք Երեւանի մէջ Ռաֆֆի Յերմոն Արաքսին բախտ կը վիճակուի ստանձնել «Արմէնբրէս» գործակալութեան թրքերէն բաժնի գլխաւոր տնօրէնի պաշտօնը, սակայն ցաւալիօրէն այդ պաշտօնը երկար չի տեւէր ճակատագրի սեխաղով եւ վրայ հասած տխուր մահուան հետեւանքով:

Ըլլալով մտաւորական ընտանիքի գաւակ, Ռաֆֆի Յերմոն Արաքս ամենուրեք դարձաւ ապրող պոլսահայութեան շէնչող ձայնը: Ձայն, որուն մէջ կար արեւմտահայ իր նախնիներու շունչը ու այսօրուան Հայաստանին հանդէպ անմար սէրն ու եռանդը:

Ռաֆֆի Յերմոն Արաքսի ապրած 63 գարունները հայրենասէրի մը ապրած իրական ճաճանչներն են ու անոր անունը միշտ վառ պիտի մնայ գինք ճանչցողներու եւ իր հետ կեանք կիսած հարազատներու սրտին ու հոգիին մէջ:

Խաղաղութիւն Չեն Սուրում, Պարտադրում Են

Շարունակուած էջ 2-էն

պատերազմում Թուրքիայի բացայայտ ներգրաւուածութիւնը բացասական ազդեցութիւն են ունենում տարածաշրջանի խաղաղութեան եւ կայուն զարգացման վրայ: Հայաստանը մշտապէս պատրաստ է եղել Թուրքիայի հետ առանց նախապայմանների յարաբերութիւնների կարգաւորմանը: Միաժամանակ նշուած է, որ Թուրքիայի հետ յարաբերութիւնների կարգաւորումը բխում է տարածաշրջանի կայունութեան, անվտանգութեան եւ տնտեսական զարգացման շահերից, եւ առանց նախապայմանների, կողմերը պէտք է գործակցեն՝ ձեւաւորելու փոխվստահութեան մթնոլորտ՝ աստիճանաբար բնականոն յարաբերութիւններ հաստատելու նպատակով:

Հայաստանի իշխանութիւնները միջազգային հանրութեանը հրապարակային հարց ուղղե՞լ են, թէ տարիներ շարունակ դարաբաղեան խնդրի չլուծուած լինելու հանգամանքով պայմանաւորուած Հայաստանի հանդէպ թշնամական քայլ դրսեւորած Թուրքիան, որը Հայաստանը շրջափակման մէջ է պահել, ինչո՞ւ ինքնակամ չի բացում Հայաստանի հետ սահմանը Ալիեւի՝ պատմական յաղթանակներից յետոյ: Մի կողմ թողնենք այն հարցը, որ Հայաստանի իշխանութիւնն այսօր առ-

հասարակ պէտք է հստակեցնի, թէ որքանով է անվտանգ լինելու ՀՀ քաղաքացիների համար բացուած հայ-թուրքական սահմանը, եթէ, ենթադրենք, այն բացուի: Այստեղ այլ հարց է կարեւոր՝ ի՞նչ ակնկալիքներ ունի դեռ պաշտօնական Անկարան պաշտօնական Երեւանից: Թուրքիան շարունակում է լիակատար աջակցութիւն Ատրպէյճանի ագրեսիւ քաղաքականութեանը, հետեւաբար պաշտօնական Երեւանը պէտք է պարզաբանի, թէ ինչո՞ւ է Թուրքիայի հետ դիւրանադիտական յարաբերութիւնների հաստատման միակողմանի ձգտում: Իսկ էրդողանի իշխանութիւնը դա ցանկանո՞ւմ է, կամ եթէ ցանկանում է՝ ինչի՞ դիմաց: Դատելով ԱԺ-ում ընդդիմադիր պատգամաւորների խոսքից՝ սահմանային իրադրութեան վերաբերեալ փակ քննարկումից յետոյ էլ նրանց մոտ պահպանուել են իրենց ունեցած բոլոր մտահոգութիւնները: Հետեւաբար, այսօր Հայաստանի հանդէպ թուրքատարպէյճանական տանդեմի կողմից շարունակվող գաւթողական, ռազմատենչ քաղաքականութեան պայմաններում Հայաստանը ստիպուած է ունենալ մէկ պարիսպ՝ հօգր պաշտպանութիւն, որն ակնյայտօրէն ՀՀ ներկայիս կառավարութիւնը չի ձգտում կազմակերպել:

«ԱՌԱՒՕՏ»

Նիկոլ Փաշինեանի Յայտարարութիւնը

Շարունակուած էջ 2-էն

գապահութեան, ենթակայութեան մասին է: Ի վերջոյ, եթէ ԱԳՆ պէտք է կիսի պատասխանատուութիւն երկրի ներկայիս եւ ապագայի համար, հետեւաբար՝ պէտք է ունենայ որոշակի քաղաքական ինքնուրոյնութիւն, ապա այդ շրջանակում կարող է նաեւ արտայայտել վարուող քաղաքականութեան հետ անհամաձայնութիւն, ընդհուպ հրաժարականի մակարդակում:

Հետեւաբար, ԱԳ նոր նախարարի ներկայացմանը վարչապետ Փաշինեանի յայտարարութիւնը հնչելով շատ կարեւոր, որովհետեւ

արտգործնախարարութիւնն իսկապէս պէտք է լինի քաղաքական ինքնուրոյնութեան եւ քաղաքական պատասխանատուութեամբ կառուց, այդուհանդերձ առաջացնում է հարցեր վարչապետ-ԱԳՆ փոխյարաբերութեան կառուցուածքի եւ տրամաբանութեան իմաստով: Ընդ որում, որ միայն վարչապետ-ԱԳՆ, այլ նաեւ պետական քաղաքականութեան հարցում առանցքային այլ պատասխանատուութիւն ունեցող միւս գերատեսչութիւնների՝ նուազագոյնը ՊՆ ու ԱԱԾ հետ աշխատանքի իմաստով:

«ԵՐԵՒԱՆ ԼՈՒՐ»

«Օրորա»-ն Կ'ամրապնդէ Արցախի Մէջ Իր Ներկայութիւնը



«Օրորա» մարդասիրական նախաձեռնութիւնը կը շարունակէ ընդլայնել «Օրորան» Արցախին» ծրագիրը: «Օրորա»-ն գրասենեակ բացած է Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտի մէջ՝ աւելի արդիւնաւէտ դարձնելու այդտեղ «Օրորա»-ի մարդասիրական գործունէութիւնը, ամրապնդելու տարածաշրջանին մէջ իր ներկայութիւնը եւ նպաստել լուրջ Արցախի դիրքերու ամրապնդման միջազգային ասպարէզին մէջ:

«Օրորան Արցախին» ծրագրի միջոցով «Օրորա» մարդասիրական նախաձեռնութիւնը կ'օգնէ Արցախի ժողովուրդին, որ 2020-ի Արցախեան պատերազմէն յետոյ յայտնուած է մարդասիրական ծանր ճգնաժամի մէջ: Ծրագիրը, որ սկիզբը ուղղուած էր պատերազմէն տուժած մարդոց հրատապ օժանդակութիւն տրամադրելուն, այսօր կ'աջակցի նախազիծերու, որոնք կը խթանեն տարածաշրջանի ընկերային երկարաժամկէտ զարգացման: Այս բնագաւառին մէջ աշխատող եւ օգնութեան կարիք ունեցող որեւէ կազմակերպութիւն կրնայ յայտ ներկայացնել:

«Ստեփանակերտի մէջ «Օրորա»-ի գրասենեակ ունենալը

կը վկայէ այն մասին, որ մենք այստեղ ենք երկար ժամանակով: Տասնեակ տեղական եւ միջազգային գործընկերներ միացած են մեր ծրագրին, եւ շատ կարեւոր է, որ այդ նախազիծերը տեղ գտնեն համաշխարհային շրջանակին մէջ ու կապուին Արցախի ներկայ իրավիճակին հետ: Սա պարզապէս գրասենեակ չէ, այլ՝ շահագրգիռ կողմերու համար տարածք մը, ուր իրենք կրնան գալ եւ ներկայացնել իրենց փորձը՝ վստահ ըլլալով, որ ոլորտի բոլոր մարդասիրական ջանքերը լաւ համակարգուած են: Համագործակցութեան նման բանաձեւը կրնայ ոչ միայն օգնել Արցախին, այլեւ ամբողջ աշխարհի մէջ օրինակ դառնալ բոլորին համար», նշած է «Օրորա» մարդասիրական նախաձեռնութեան համահիմնադիր Ռուբէն Վարդանեան:

Նշենք, որ Արցախի մարդասիրական օգնութեան ծրագրի մեկնարկէն ի վեր «Օրորա»-ն աւելի քան 900.000.000 դրամ (1,740,000 տոլար) յատկացուցած է՝ աջակցելու տեղական ու միջազգային 55 գործընկերող կողմէ իրականացուող 80 նախազիծի, այդ շարքին՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամին միջոցով անյապաղ

մարդասիրական օգնութիւն ցուցաբերելու Արցախի ժողովուրդին: Աւելի քան 130,000 մարդ արդէն իսկ օգտուած է այդ նախազիծերէն: «Օրորան» Արցախին» ծրագիրը նաեւ կը ներառէ աշխարհի առաջատար մարդասէրները տարածաշրջան հրաւիրելը, 2020-ի պատերազմէն յետոյ Արցախ այցելած են եզտի աքթիվիսթ Միրզա Տինային եւ «Բժիշկներ Առանց Սահմաններ» կազմակերպութեան հիմնադիր Պեռնար Քուշները՝ տեղացիներուն օգնելու նոր հնարաւորութիւններ եւ արդիւնաւէտ լուծումներ գտնելու նպատակով:

«Օրորա»-ն կը շարունակէ անցում կատարել զարգացման ծրագրերուն, եւ այս առումով այստեղ գրասենեակ ունենալը թոյլ

կու տայ մեզի համահունչ ըլլալ տեղի բնակչութեան երկարաժամկէտ կարիքներուն: Կոչ կ'ընենք բոլոր կազմակերպութիւններուն, որոնց նախազիծերը կը բարելաւեն տեղահանուած ընտանիքներու ընկերա տնտեսական պայմանները, կը խթանեն երիտասարդներու մասնագիտական հմտութիւնները, կը նպաստեն մարդկային դրամագլուխի զարգացման եւ որեւէ այլ ձեւով կ'ապահովեն կայուն փոփոխութիւններ, դիմեն ծրագրին: Մենք վստահ ենք, որ այդ պիտի նպաստէ տեղական համայնքներու եւ մեր հայրենիքի հզօրացման», ըսած է «Օրորան» Արցախին» ծրագրի ղեկավար Նարինէ Աղապալեան, որ Արցախի մէջ «Օրորա»-ի գրասենեակի պատասխանատուն է:

Պայծառ Յիշատակդ Մեր Սրտերում

Շարունակուած էջ 2-էն

արտայայտութեամբ: Եկեղեցու 50 ամեակի յոբելեանի առիթով յանձնարարուել էր Ալմինին գրել պատմութիւնը եւ կազմել գիրքը, այդ առիթով նա ոգեւորութեամբ կարդաց գրած քառատուն բանաստեղծութիւնը: Իմ վերադարձին Գլենդէլ թղթակցութեան յօդուածումս քառատողը տպուեց, որը ներկայացուած է՝

Եկեղեցին այս սուրբ շինութիւն չէ միայն,
Քրիստոսային հաւատամք ու հաւատք խորին,
Ժողովուրդ է հայ, մարդկութիւն է համայն,
Սէր է, փրկութիւն, Աստուածութիւն է համայն:

Այդ օրը Ալմինը բարձր տրամադրութիւն ունէր, առողջ ու աշխուժ, միայն նրա մագերը սեպսպիտակել էին: Ալմինը գուշակում եմ վեց-եօթ բանաստեղծական գրքեր է գրել, նա թէ անդամ էր ՀԳՄ եւ թէ՛ իրանի հայ գրողների միութեան: Ես շարունակ Ալմինին նմանացրել եմ Գէորգ Էմինին, հասակով մէկ չափի խոհուն ու մտածկոտ:

Թղթերիս մէջ պրպտում էի Ալմինի բանաստեղծութիւններից (նրա գրքերից մնացին Թեհրանում) գտայ երկուսը, մէջբերում եմ անմոռաց չիշատակելու իր բանաստեղծական տաղանդը խոհերով եւ իմաստութեամբ բխող գրուածներ:

Ժամանակակիցներիս

Արդէն ծնուել ենք միեւնոյն դարում:
Եթէ չեմ կարող իմ դարը փոխել՝
Ծանօթ-անծանօթ ձեռքեր եմ սեղմում,
Ոսկրոտ ձեռքեր եւ ոտքեր հողէ...

Արդէն ծնուել ենք միեւնոյն դարում:
Եթէ չեմ կարող ձեռքեր փոխել՝
Խոր հաւատացք, որ հեց ա'յս օրում
Ձեր իսկ ձեռքերով շա'տ բաներ փոխուեց:

Արդէն ծնուել ենք միեւնոյն դարում:
Եթէ չեմ կարող ձեռքեր փոխել՝
Կարող ենք սիրել, եւ սիրոյ բառում
Յար կը մոռացուեն քէներ ու ռիսեր...
Արդէն ծնուել ենք՝ չարի աչքը դո'ւրս:
Արդէն ծնուել ենք կեանքի աչքը լոյս:

Լուսաբաց

Օ՛, ծիտիկներ, ծիտիկներ,
Երգացանկը բնութեան
Կտուցին է ձեր փոքրիկ-
Թելիկներին փոփոռան
Ու կոկորդում երգասա՛ց...

Բացում է կաթ լոյսը մեղմ
Ծլվլոցով ձեր քաղցրիկ,
Առաւօտն է արթնանում
Ինչպէս մանուկ մի փոքրիկ,
Օ՛, ծիտիկներ, մնացէք-
Ծլվլացք մ'իշտ մեզ մօտ.
Կամ քիւերին ձեզ պարզուած
Ու ծիւղերին գրկաբաց,
Թող լուսաբոյր երգով ձեր
Բացուի ամէն լուսաբաց,
Մի բուռ հատիկ,
Մի կում ջուր,
Ձեզ կը տան մարդ ու...Աստուած...

Օ՛, ծիտիկներ, ծիտիկներ,
Փոքրիկ, սակայն, մի'շտ կրա՛կ,
Դուք բնութեան զարկերա՛կ,
Աշխարհը ձեր թելերի տակ,
Ձրի ամէն մի կաթիլ
Ձեր կտուցին՝ փառք է թա՛նկ...

Կանուխ էր Ալմինի մահը այդ սաղայէլի ծնունդը իյեց նրա կեանքը, նա ֆիզիկապէս կատարեալ առողջ մարդ էր դեռ շատ յոյսեր եւ գրելիքներ ունէր: Նրա գրուածքները աղբիւրի պէս յստակ ու սահուն պիտի մնան իւրաքանչիւր տեղեակ հայ ընթերցողի սեղանին: Կորուստը մեծ է եւ ցաւալի խորին ցաւակցութիւններս իր ընտանեկան կազմին, հարազատներին եւ համայն ճանաչողաց:
Յիշատակն արդարօրոյն օրհնութեամբ եղիցի:

St. Gregory Armenian Saturday School

BACK TO SCHOOL

~ FALL SEASON ~

Registration August 28, 2021 September 11, 2021	Everyone ages 5-12 at any level are welcome!
School Resumes September 11, 2021 10am - 12:45pm	Subjects taught include:
Annual Tuition \$495	- Armenian Language - Armenian History - Armenian Culture & Events - Music and more...

For more information contact us:


626.449.1523
stgregorysaturdayschool@gmail.com

2215 E Colorado Blvd.
Pasadena, CA 91107

Ձեր Ծանուցումները Կատահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
 Massis2@earthlink.net (626) 797-7680

Ոչ եւս է ԸՆԿեր Սարգիս Գուգուեան

Երեւանի մէջ, 19 Օգոստոս 2021-ին, մահականացուն կնքած է Ս.Դ.Հ.Կ. Հիւսիսային Սուրբիոյ Վարիչ Մարմինի նախկին անդամ ընկեր Սարգիս Գուգուեանը:



Ընկեր Գուգուեան երկարամեայ վաստակ ունի Կիլիկեան շրջանակէն ներս: Ան 1975-էն սկսեալ նախ մաս կազմած է Կիլիկեան Կրթական Հաստատութեան հոգաբարարձութեան ապա իր անգնահատելի ծառայութիւնը մատուցած է Ս.Դ.Հ.Կ.-ի Հայկալի շրջանի վարիչ մարմնի մէջ: Ընկերոջ մանկութիւնն ու պատանեկութիւնը անցած ըլլալով Հայկալի Տաւուտիէ արուարձանին մէջ, հոն ալ թրծուած է որպէս Հ.Մ.Մ.ական ապա եօթանասուն թուի կէսէրուն անցած է կուսակցութեան շարքերը: Ընկեր Սարգիսի գործնական մուտքը Կիլիկեան շրջանակէն ներս, գուգուեանեաց աջ բուռն վերելքի շրջանին, երբ յոյժ անհրաժեշտութիւն մըն էր իւրաքանչիւր սրտցաւ Հնչակեանի առարկայական ներկայութիւնը, թէ նիւթական եւ թէ բարոյական իմաստով: Ի պատիւ իրեն, պէտք է խոստովանիլ, որ ինքը՝ ազնուօրէն ոչ միայն գործնական աջակցութիւն բերաւ ԱԿՈՒՄԲ-ի գնման ու վերակառուցման այլեւ քաջալեր հանդիսացաւ, երիտասարդութեան կազմակերպած իւրաքանչիւր ձեռնարկին: Ընկերը, մօտ քառորդ դարէ աւելի, ջանք եւ ճիգ չխնայեց վասն Ս.Դ.Հ.Կ.-ի ու անոր բաղկացուցիչ միութիւններուն ու հաստատութիւններուն բարգաւաճման: Ան, գործի մարդ էր:

Ոչ եւս է ԸՆԿ. Կարպիս Ապէճեան

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Աւստրալիոյ շրջանի վարիչ Մարմինը կը գլխավորէ շրջանի հաւատաւոր ընկերներէն եւ վարիչ մարմինի երկարամեայ անդամ ընկ. Կարպիս Ապէճեանի անակնկալ մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 20 Օգոստոս 2021ին, Սիտնիի իր բնակարանին մէջ, սրտի կաթուածի հետեւանքով:



1952-ին Սուրբիոյ մէջ ծնած ընկերը շատ կանուխ ներգրաւուեցաւ միութեանական աշխատանքի մէջ՝ վարելով ՀՄՄ Հայկալի սկաուտական շարքի խմբապետութիւնը: Հաստատուելով Սիտնի, ընկ. Կարպիս Ապէճեան շարունակեց իր անշահախնդիր եւ ծառայատէր աշխատանքը Նոր Սերունդ Մշակութային միութեան եւ Հնչակեան կուսակցութեան շարքերուն մէջ, բազմիցս ընտրուելով վարիչ Մարմինի անդամ: Ամուսնացած է Անի Պետրոսեան-Ապէճեանի հետ, ունի երկու զաւակ:

ՑԱՒԱՅՍԱԿԱՆ

Ընկ. ՍԱՐԳԻՍ ԳՈՒԶՈՒԵԱՆԻ մահուան տխուր առիթով (մահացած երեւան) «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնը իր խորագրաց վշտակցութիւնները կը յայտնէ Հիւսիսային Սուրբիոյ ՍԴՀԿ վարիչ Մարմնի նախկին ատենապետի տիկնոջ, զաւակներուն եւ համայն ընտանեկան եւ ընկերային պարագաներուն, մասնաւորաբար ձորճ Գուգուեանին, Միսաք եւ Թամար Հեքիմեանին եւ Կարօ եւ Անի Պէքարեանին:

Յակոբ Ատալեանի Յիշատակին՝ Մահուան Քառասունքին Առիթով

Յակոբ Ատալեանի մահախօսականը («Մասիս» 31 Յուլիս 2021 թ.) պատրաստած «Շիրակաշէն» խմբակցութեան կողմէ, որուն ատենապետը եղած էր հանգուցեալը վերջին տասնամեակին, բազմակողմանիօրէն կը ներկայացնէր այդ արժանաւոր հայորդիին: Այստեղ պիտի փորձենք աւելցնել մեր դիտարկումները՝ աւելի ցայտուն ներկայացնելու համար այդ իրապես արտասովոր ունակութիւններու տեր անձնաւորութիւնը: Յակոբի համար ըստեցաւ, որ ան ատենապետն էր «Շիրակաշէն» խմբակցութեան, նաեւ «Հայ տուն» ակումբին, մենք կ'աւելցնենք՝ նաեւ «Վերնատուն» խմբակին, որուն մաս կը կազմենք մենք: Այս վերջինը կու գայ փաստելու, որ Յակոբ Ատալեանը օժտուած էր առաջնորդի բնածին յատկութեամբ եւ այդ պատճառով ինքը կ'ընտրուէր իր մասնակցած միաւորումներու ղեկավարը:

Մահախօսականի մէջ կ'ըսուէր, որ Յակոբը «հաճելի գուարթախօս էր, իր դիպուկ կատակներով ջերմ մթնոլորտ ստեղծող»: Հոս տեղին է օրինակով մը ընթերցողին աւելի յստակ պատկերացում մը տանք այդ մասին: Յակոբի սուր աչքէն երբեք չէին վրիպեր մէկու մը հազնուածքի թերութիւնները կամ, ընդհակառակը, դրական կողմերը, եւ այդ բոլորը ինքը կը մատուցէր նուրբ երգիծանքով՝ միշտ ուղեկցելով իր սիրած արտայայտութեամբ՝ «... կը նմանի կնկայ մը, որ...»:

Մեզի կը մնայ աւելցնել հետեւեալը. եթէ «Շիրակաշէն»ը ձեռնամուխ ըլլայ հրատարակելու Յակոբ Ատալեանի կատակաբանութիւններու գրքոյկ մը, մենք պատրաստ ենք մեր լուծման մուծելու: «Վերնատուն» խմբակցութիւն

ՄԱՐԱԶԴ



ԺՈՉԷՖ ՍԷԲԻԼԵԱՆ (Ծնեալ՝ 1937ին Մուսա Լեռ)

Սրտի դառն կակիծով կը գլխակէր մեր սիրեցեալ ամուսնոյն՝ հօր, մեծ հօր եւ հարազատին՝ ԺՈՉԷՖ ՍԷԲԻԼԵԱՆԻ մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 12 Օգոստոս 2021ին, Քուէյթի մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Չորեքշաբթի, 18 Օգոստոս 2021ին, Այնճարի Ս. Պողոս եկեղեցւոյ մէջ, Լիբանան:

- Սգակիրներ՝ Այրին՝ Նուէր Սէբիլեան
- Չաւակները՝ Սարօ եւ Հուրի Սէբիլեան եւ զաւակները՝ Լուի, Ժոզէֆ եւ Փօլ
- Տօքթ. Վիգէն եւ Մարինա Սէբիլեան եւ դուստրը՝ Ժոզէֆին Արա Սէբիլեան եւ զաւակները՝ Նանար եւ Շանթ (Լիբանան)
- Դուստրը՝ Մարիա եւ Գարլ Սալիպա եւ զաւակները՝ Հայկալ եւ Վիգէն (Քուէյթ)
- Եղբայրը՝ Ազատ եւ Նուարդ Սէբիլեան եւ զաւակները
- Եղբօր կինը՝ Ժորժէթ Սէբիլեան եւ զաւակները (Լիբանան)
- Քոյրերը՝ Իվոն եւ Չաւէն Չէքեան եւ զաւակները
- Ժանէթ եւ Փօլ Ժրգրաուի (Լիբանան)
- Աներորդիները՝ Գրիգոր եւ Սեդա Գալէնտէրեան եւ զաւակները (Լիբանան)
- Գէորգ եւ Սեւան Գալէնտէրեան եւ զաւակները
- Քենին՝ Վարդուհի եւ Տօքթ. Արշակ Գազանճեան եւ զաւակները
- Եւ համայն Սէբիլեան, Տալուզեան, Անանեան, Չէօքճեան, Սալիպա, Ազար, Գալէնտէրեան, Գազանճեան, Աբրահամեան, Նիկոլեան, Կամպարեան եւ Բէտրն ընտանիքընէ, հարազատներն ու բարեկամները:
- Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել Լիբանանահայ կարօտեայներուն (Armenian Ecclesiastical Brotherhood, 206 W. Cypress Stree, Glendale, CA 91204):

ՑԱՒԱՅՍԱԿԱՆ

ԺՈՉԷՖ ՍԷԲԻԼԵԱՆԻ մահուան տխուր առիթով Հ.Մ.Մ.ի Տիկնանց վարչութիւնն ու անդամուհիները իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի այրիին՝ Տիկ. Նուէր Սէփիլեանին, զաւակներուն եւ համայն ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Սարօ եւ Հուրի Սէբիլեանին, Տօքթ. Վիգէն եւ Մարինա Սէփիլեանին եւ Տօքթ. Արշակ եւ Վարդուհի Գազանճեանին:

ՑԱՒԱՅՍԱԿԱՆ

ԺՈՉԷՖ ՍԷԲԻԼԵԱՆԻ մահուան տխուր առիթով (մահացած Քուէյթ) Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնն ու անդամները իրենց խորագրաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի այրիին Տիկին Նուէր Սէփիլեանին, զաւակներուն եւ ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար քենիին Վարդուհի եւ Տօքթ. Արշակ Գազանճեանին:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :-----

Email: -----

«Ռոմայի» Յաղթանակն Ու Չեմբիխ Մխիթարեանի Կողմ



Ֆուտբոլի Իտալիոյ առաջնութեան մեկնարկային հանգրուանին «Ռոմայի» ընդունեց «Ֆիորենտինային»: Փորթուկալացի ժողէ Մոուրինիոյ գլխավորած խումբը յաղթանակ տարաւ 3:1 արդիւնքով:

Ա. Սերիայի նոր մրցաշրջանին Ռոմայի առաջին կողմ նշանակեց Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը, որ աչքի ինկաւ 26-րդ վայրկեանին: Կողային փոխանցումը կատարեց հոմէական խումբի նորեկ, անգլիացի յարձակող Թեմի Աբրահամը:

60-րդ վայրկեանին «Ֆիորենտինան» կարողացաւ վերականգնել հաւասարութիւնը սերպ պաշտպան Նիկոլա Միլենկովիչի կողմ շնորհիւ:

4 վայրկեան անց «Ռոմայի» երկրորդ կողմ նշանակեց ֆրանսացի կիսապաշտպան ժորժան Վերետուն: Կողային փոխանցումը դարձեալ կատարեց Թեմի Աբրահամը:

80-րդ վայրկեանին վերետուն նշանակեց իր երկրորդ կողմ: Հենրիխ Մխիթարեանին 84-րդ վայրկեանին փոխարինեց իտալացի յարձակող Ստեֆան Էլ-Շարափը:

Հոմի Ողիմպիական խաղադաշտի մէջ ներկայ էր 27 հանդիսական:

Եուվենթուսի Փոխնախագահ. Պետք Չէ Մեծ Աղմուկ Ստեղծել, Ռոմալիւն Լաւագոյն Մարզավիճակի Մէջ Չէ

Թուրինի Եուվենտուսի փոխնախագահ Պավել Նեդվեդը մեկնաբանած է իտալացի Մասիմիլիանո Ալեգրիի գլխավորած խումբի մեկնարկային կազմի փոթորակալացի յարձակող Կրիշտիանու Ռոնալտուի բացակայութիւնը: Ան պահեստայիններու մէջ էր: Իտալական մամուլը գրած է, որ փոթորակալացի մինչեւ կը պատրաստուի փոխէ իր ակումբը:



«Պետք չէ մեծ ասղմուկ ստեղծել այստեղ, որտեղ չկայ: Մեկնարկային կազմին մէջ չընդգրկուելու հետ կապուած որոշումն ընդունուած է Ռոնալտուի հետ համատեղ: Ակնյայտ է, որ մրցաշրջանի մեկնարկին անլաւագոյն մարզավիճակի մէջ չէ», ըստի է Պավել Նեդվեդը:

Իտալիայի առաջնութեան մեկնարկային շրջանին Եուվենտուսը հիւրընկալած էր է Ուդինեզէին ու խաղը աւարտած Յուվենտուսը Շչեսնի, Դանիլօ, Դէ Լիգո, Բոնուչի, Սանդրօ, Կուադրադօ, Բենտանկուր, Ռեմզի, Բեռնարդեսկի, Դիբալա, Մորատա:

Արսենալ - Չելսի՝ 0:2 Լուկակուի Առաջին Կողմ Վերադարձէն Յետոյ

Անգլիոյ առաջնութեան երկրորդ հանգրուանին տեղի ունեցաւ լոնտոնեան Արսենալի եւ Չելսիի մասնակցութեամբ խաղը: 2:0 հաշուով վստահ յաղթանակ տարաւ գերմանացի Թոմաս Տուխելի գլխավորած խումբը:

Վերադարձէն յետոյ առաջին կողմ Չելսիին նշանակեց պելճիգացի յարձակող Ռոմելու Լուկակուն: Աչքի ինկաւ նաեւ անգլիացի պաշտպան Ռիս Ջեյմսը:

Չելսին 6 կէտով հաւասարեցաւ առաջատարներ Լիվերփուլին, Պրայթթին եւ Թոթեմհեմին: Արսենալը կրեց երկրորդ պարտութիւնը եւ նախավերջինն է:



Օրուայ միւս մրցումներուն արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Լիվերփուլ - Պըրնլի 2-0
- Լիծ Եուն, - Էվըրթըն 2-2
- Մանչեսթըր Սիթի - Նորիչ Սիթի 5-0
- Պրայթթըն Էնտ Հով Ալպ. - Ուաթֆըրտ 2-0

Էլինա Դանիլեանն Առաջինը Նորանկախ Հայաստանի Շախմատիստներէն Հռչակուեցաւ Եւրոպայի Ախոյեան



Ռումանիայի Եասի քաղաքին մէջ աւարտեցաւ շախմատի Եւրոպայի կանանց անհատական առաջնութիւնը:

Հայկական շախմատի պատմութեան մէջ առաջին անգամ կանանց պաշարին Հայաստանը ախոյեան ունի: Հաւաքականի առաջին համար էլինա Դանիլեանը վերջին շրջանին կարողացաւ առաւելութեան հասնիլ Էստոնուհի Մայի Նարվայի նկատմամբ ու վաստակած 9 միաւորով դառնալ Եւրոպայի ախոյեան:

Ունեցած 11 խաղերուն Դանիլեանը արձանագրեց 7 յաղթանակ, 4 ոչ-ոքի ու չկրեց ոչ մի պարտութիւն:

Դանիլեանը 2011-ին դարձած էր Եւրոպայի առաջնութեան պրոնզէ մետալակիր:

Ռաֆիկ Մինասեանը Գերազանցեց Երկու Թուրք Ծանրորդներուն Եւ Հռչակուեցաւ Եւրոպայի Ախոյեան



Լեհաստանի մէջ ընթացող ծանրամարտի Եւրոպայի պատանեկան առաջնութեան յաղթող դարձած է Հայաստանի ներկայացուցիչ, Գիւմրիի ՄԲՎԴ (Մարզական Բարձրագոյն Վարպետութեան Դպրոց) սան Ռաֆիկ Մինասեանը:

61 կգ քաշային կարգին Ռաֆիկը գերազանցած է երկու թուրք մարզիկներու: Պոկում վարժութեան մէջ ան 114 կգ արդիւնքով գրադեցրած է 2-րդ հորիզոնականը, իսկ հրում վարժութեան մէջ 9 կիլոգրամով գերազանցած է թուրք մարզիկին եւ գրանցած է 144 կգ արդիւնք: Այս արդիւնքը բաւարար եղած է երկամարտի հաշուարկով ախոյեան դառնալու համար: Երրորդ անգամ ծանրածոլին մօտենալու անհրաժեշտութիւն այլեւս չէ եղած:


Երկամարտին Ռաֆիկ Մինասեանը գրանցած է 258 կգ արդիւնք:

Հոֆենհայմը Սարգիս Ադամեանի Հետ Ոչ Ոքի Խաղաց

Գերմանիայի առաջնութեան երկրորդ հանգրուանին «Հոֆենհայմը» սեփական դաշտի վրայ մրցեցաւ «Ունիոն Պեռլինի» հետ: արձանագրուեցաւ ոչ ոքի: Խումբերը երկուական կողմ փոխանակեցին:

Հայաստանի հաւաքականի եւ «Հոֆենհայմի» յարձակող Սարգիս Ադամեանը փոխարինման դուրս եկաւ 62-րդ վայրկեանին:

«Հոֆենհայմը» 4 կէտով երկրորդ տեղը կը գրաւէ եւ ընթացիկ առաջատար «Վոլֆսբուրգի» ետ է 2 կէտով:




Քալիֆորնիոյ Նահանգապետի Պաշտօնանկութեան Քուէարկութիւն

14 Սեպտեմբերին

Ստուգեցէ՛ք ձեր նամակատուփը: Քուէաթերթիկները ճամբա'ն են:

Քուէաթերթիկները կրնաք նամակատարով վերադարձնել
նախապէս վճարուած թրոշմաթուղթով՝ զայն առաքելով ապահով
նամակի տուփի մը մէջ նետելով կամ անձամբ:

ՁԵՐ ՔՈՒԻԷՆ ՁԵՐ ՁԱՅՆՆ Է



Իմացէք, թէ ինչի՛ կարիքը
ունիք, այսօ՛ր:

vote.ca.gov/